


## Atanayi jardě ew pataskhanatunerě / heghinav Mushegh Episkopos.

Mushegh, Archbishop, 1869-

Post'on : Tpagrutiwn "Azg"i, 1910.

<http://hdl.handle.net/2027/mdp.39015088848893>

# HathiTrust



[www.hathitrust.org](http://www.hathitrust.org)

### Public Domain

[http://www.hathitrust.org/access\\_use#pd](http://www.hathitrust.org/access_use#pd)

We have determined this work to be in the public domain, meaning that it is not subject to copyright. Users are free to copy, use, and redistribute the work in part or in whole. It is possible that current copyright holders, heirs or the estate of the authors of individual portions of the work, such as illustrations or photographs, assert copyrights over these portions. Depending on the nature of subsequent use that is made, additional rights may need to be obtained independently of anything we can address.

GRAD

A 1,205,705

-----  
DS  
195  
.M873

ՀԲ 1910 ԻՐԻՒՆ «ԱԶԳ»Ի - ԹԻԻ 2

# ԱՏԱՆԱՅԻ ԶԱՐԴԸ


— ԵՒ —

## ՊԸՏԵՍԻՆԵՏՈՒՆԵՐԸ



Հեղինակ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ



— Երկրորդ Տպագրութիւն —

ՊՈՍԹՈՆ

Տպագրութիւն «Ազգ»ի

1910

GRAD  
DS  
195  
.M873  
1910

*Edward and Helen Mardigian  
Armenian Reference and Research Library*

From the Collection of  
**Library**  
Vahe Tashjian  
1990  
ARTES SCIENTIA VERITAS  
UNIVERSITY OF MICHIGAN 1817



National Association for  
Armenian Studies and Research  
Belmont, Massachusetts

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հարուածը՝ ծանր, արիւնը՝ յորդահոս, եղեռնը՝ քսամնելի ու տառապանքը անհանգուրթելի: — Ահա ա՛յն վիճակը, որուն ենթարկուեցաւ Ատանա, իր շրջակայքով, Օսմ. Հայրենիքի եղբայրակցութեան շրջանին մէջ:

Արիւնոտ համբոյր...

Կսկիծը քարացուցած է զիս, ու արցունքը ցամքեցուցած՝ կոպերուս տակ: Ինծի համար տանջանք մըն է նոյն իսկ խորհիլ այդ գազանային եղեռնագործութեան մասին, զոր Մէրսինի օտար հիւպատոսներէն մին սապէս նկարագրեց. «Իմ ուժէս շատ վեր պիտի ըլլար նկարագրել ձեզի մեր նահանգին մէջ պատահած վերջին դէպքերը: Պատմութիւնը ամենասե գոյներով պիտի արձանագրէ զանոնք: Անհաւատալի բարբարոսութեամբ և վայրենութեամբ տեղի ունեցած այս դէպքերը մարդկային միտքը պիտի չկրնայ ճշգրտօրէն նկարագրել: Ներսն պիտի նախանձէր, և հռչակաւոր թիմուրլէնկ քաջութիւնը պիտի չունենար այս տեսակ խժդժութիւններ ի գործ դնել քաղաքակիրթ աշխարհի աչքերուն տակ»: Ու եթէ երբէք ուզուէր այդ համատարած եղեռնը խտացնել քանի մը բառերու մէջ, պէտք պիտի ըլլար փոխ առնել Հ. Սէնքիէվիչի ՀՐՈՎ ԵՒ ՍՐՈՎին սա քանի մը տողերը. «Ահաւոր հրդեհը, կոտորածը, վայրագ բռնաբարութիւնները, այս ամէնը այնպիսի արագութեամբ յաջորդեր էին մէկմէկու, որ ո՛չ ոք կը հաւատար ահագին աղէտներուն: Շատերը սարսափէն ապուշ դարձած, շատերը խելքերնին կը

Թռցնէին... ընկերական կամ ընտանեկան բոլոր կապերը խզուած էին, հեղինակութիւն չկար. անձի զանազանութիւնը ջնջուած էր... Կարծես դըժոխքը չար ոգիին շղթաները խորտակած՝ զանիկա դրկեր էր աիրելու երկրիս վրայ: Կոտորածը, կողոպուտը, բռն սքարութիւնը, վայրագութիւնը կը փոխ անակէին աշխատութեան, համեստութեան, խղճի, հաւատքի: Հրդեհներու ծուխը արևու լոյսը կը խափանէր, գիշերները բոցերու շարագուշակ փայլ մը կը լուսաւորէր օդը... Կը ծխային քաղաքներ, գիւղեր և դաշտեր... Մարդիկ խօսելու վարժութիւնը կորսնցուցած կը հեծէին... Կեանքը իրեն յարգը կորսնցուցած էր. հազարաւոր մարդիկ կորսուած՝ առանց հեռք մը ձգելու... »

Եւ խորհի՛լ թէ ներքին Գործոց խորհրդական Ատիլ պէյ, ջարդի պահուն սա հեռագիրը կը փութացնէր Կիլիկեան բոլոր պաշտօնէութեանց. «Մեծագոյն ուշադրութեամբ հոգ տարուի, որ փնաս չհասնի օտար կրօնային հաստատութիւններուն և հիւպատոսարաններուն», հեռագիր, որ Հայերը ջարդելու հրաման մըն էր, Համիտեան բնադրոշմով մը խմբագրուած :

Եւ խորհի՛լ, թէ Մեծ-Եպարզոս Հիւսէյին Հիւմի փաշա, իր պաշտօնական հեռագրով կը փորձէր հերքել Սէլանիկէն ղրկուած զօրքերու մասնակցութիւնը այդ հայասպան կոտորածներուն, ջարդերուն...

Եւ խորհի՛լ, թէ փոխանակ Կիլիկիոյ աղէտքին լուրջ և իրական դարման մը խորհելու, Սահմանադրական Կառավարութիւնը անորակելի ձեռնարկներ ի գործ կը դնէ, բանտարկեալներէ բռնի ստորագրութիւններ կորզելով, այդ հրէշային կոտորածներուն պատասխանատուութիւնը բեռցնե-

Generated on 2017-07-07 09:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015088846893  
Public Domain / http://www.hathitrust.org/access\_use#pd

Գ.

լու արիւնսզանք Հայութեան ուսին վրայ...

Ջարդէն վերջ, անոր չափ անհանդուրժելի և քստմնելի է սա խաղցուած շնական կասակերգութիւնը:


Հասարակութեան միտքերը լուսաբանելու, և պատասխանատուութիւնները ճշդելու համար հարկ տեսանք պատրաստել՝ ափ յափոյ՝ ներկայ տեղեկագիրս, որ իր մէջ կ'ամփոփէ Ատանայի և շրջակայքի կոտորածներուն նախընթաց պարագաները մինչև Ապրիլ 1/14 թուականը:

Սոյն տողերը կը յանձնենք Հայութեան ուշադրութեան և քաղաքակիրթ աշխարհի դատաստանին:

Վշտակիր Առաջնորդ Հայոց Ատանայի  
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

3/16 Մայիս 1909

Գահիրէ





## ԿՆՆԻՆՄՏԵՆՕՒՒՆՕՒ ՈՃԻՐԸ



Ատանայի ահռելի ջարդը, որ իր քստմենլի և վայրագ տեսարաններովը բոլոր նախորդ կոտորածները կը գերազանցէ . անգամ մըն ալ՝ ընդհանրապէս Մարդկութեան ու մասնաւորապէս Հայութեան սիրտը խշխշցուց բիրաւորներու սպաննութիւններով և բազմաթիւ քաղաքներու և գիւղերու կործանումով :

Օսմ . Սահմանադրութեան հռչակումէն վերջ թուրքիոյ ու մասնաւորապէս թուրքիոյ Հայութեան բնաջնջումին դժոխային ծրագիրը երկնոց և 20—25 տարիներէ ի վեր զայն կատաղօրէն ի գործ դնող Սուլթան Համիտի գահընկէցութիւնը իր արիւնտաներկ զոհերուն՝ Հայերուն՝ միակ մխիթարութեան պատճառը ըլլալ սահմանուած էր : Հայերու այդ երջանկութիւնը անգամ մըն ալ ու աւելի ահռելիօրէն արիւններով պատանքուեցաւ . այնպէս որ Ատանայի և շրջակայքի և ամբողջ Կիլիկիոյ արիւննազանգ ջարդերուն և զուլումներուն մէջէն Հայութիւնը հազիւ թէ արցունքէն իսաւարած աչքով ու նախճիրէն սրտաբեկ հեծեծանքով մը կրցաւ հանդիսատեսը ըլլալ Կարմիր Սուլթանին գահընկէցութեան :

Քսան դար առաջ Հրէաստանի թագաւոր Մեծն Հերովդէս՝ միմիայն դիւային կասկածներու վրայ յենլով՝ բիւրաւոր անմեղներու արիւնը անիրաւօ-

ընն թափելէ վերջ, երբ իր հոգեվարքի վայրկեանները մօտեցած կը զգար, կը պատմուի թէ իր Մարիանէ քրոջ սա արիւնստ խնդիրքը կ'ընէր. «Գիտեմ թէ իմ մահն» բոլոր հպատակներու ուրախութիւնը պիտի ըլլայ և պիտի չգտնուի աչք մը, որ դազաղիս վրայ արցունք թափէ, կը խնդրեմ քենէ, որ պէսզի պալատիս մէջ բանտարկեւ տաս Հրէից ազգային ժողովի թնդամ աւագանին և զանոնք գլխատել տաս իմ մահուանս օրը, որ պէսզի գտնուին տուներ, որոնք իմ մեռած օրս փոխանակ ուրախանալու արցունք թափեն իրենց սիրելիներուն վրայ»: Սուլթան Համիտ լռելեայն միւսնայնը գործադրեց Հայութեան սրտին տալով հարուած մը, որ անդարմանելի պիտի ըլլայ, և թէ իր դաւաճան ծրագիրը ու անոր գործադրութիւնը մասամբ չխափանուէր Ազատարար բանակին Պոլիս մուտքով, ամբողջ Թուրքիոյ բնակչութիւնն արիւնարբու Բռնապետին և իր շահախնդիր ու մոլեռանդ կուսակիցներուն վայրագութեանը մատնուած, զրկուած պիտի մնար եղեռնագործ Մղձաւանջին գահընկէցութեան հանդիսատեսը ըլլայէ :

Հոս մենք նպատակ չունինք աղէտքին ահաւոր համեմատութիւնները, մոլեռանդ խուժանին կողմէ ի գործ դրուած հակամարդկային վայրագութիւնները. ոճրին նրբութիւնները, ցաւին ահռելիութիւնը, փճացումին, արիւններուն դժոխային տեսարանները պարզել : Սահմանադրական Ռէժիմի մը օրով գործուած այդ մեծ եղեռնը ո՛չ միայն նախատինքը պիտի մնայ Օսմ. Ազատագրուած Հայրենիքին, այլ անբուժելի և տևականօրէն կոտտացող վէրքը Հայութեան սրտին վրայ : Իմ միակ նպատակս է հոս երևան բերել Օսմ. Սահմանադ-



րութեան հռչակումէն առաջ ու վերջ իսկ գոյութիւն ունեցող և այսպիսի դժոխային կոտորածի մը գործադրութեան համար ցոյց տրուած մտադրութիւնները, ձեռնարկութիւնները, և թուրք մոյնեանդութեան հոգեբանական վիճակը: Այսպիսի վերլուծութիւն մը պիտի նպաստէր պատասխանատուութեան ճշդումին, ինչ որ անհրաժեշտ է Մամուլի և խօսքի ազատութեան այս շրջանին մէջ: Արդարև հիմա կը սիրենք յուսալ, թէ—նայն իսկ արիւնոտ փորձառութիւններէ և խաբկանքներէ վերջ — հեռի ենք այն բռնապետական շրջաններէն, երբ ամէն իրողութիւն մութի մէջ կը մընար, ամէն ակնյայտի ճշմարտութիւն կը խեղաթիւրուէր, և անաչառ քննադատութեան ու իրողութիւններու արդարադատ և անկողմնակալ վերլուծութեան ո՛ր է փորձ կը խափանուէր:

Այսօրուան հանգամանքներու մէջ՝ ուր կը գտնուի թուրքիան, պէտք չէ և ներելի չէ որ այսքան ահաւոր չարիքի մը պատճառները, դըրդիչները և դերակատարները մութի մէջ մնան. ընդհակառակը անհրաժեշտ է, որ ամբողջ գաւառի մը քաղաքներն ու գիւղերը սուրի, հուրի և աւերումի մատնող և Օսմ. Հայրենիքին ճակատը արիւնազանգ նախատինքով մը արատաւորող վատերը երևան բերուին, և գտնեն իրենց արժանաւոր պատիժը: Առանց այս էական պայմանին, մենք հայերս պէտք չէ յուսանք թէ Սահմանադրական պայքարի այս փառաւոր յաղթանակէն վերջն ալ, այսպիսի ազգակործան ջարդեր չի պիտի կրկնուին:

1894 — 96ին և անկէ վերջ շարունակուող Հայկական կոտորածներուն հանդէպ թուրք կառավարութիւնը իր ջանքերը արդարացնող և արուես-

տականօրէն յերիւրուած իր պատճառաբաթիւնն ունէր : Այդ պատճառաբանական պատրուակը սա էր . « Հայերուն մէջ յեղափոխական շարժում կայ , անոնք հայկական թագաւորութիւն կ'ուզեն հիմնել . անոնք իրենց շարժումներով և պահանջներով զրգութիւն առաջ կը բերեն իսլամ ամբոխին մէջ » : Եւ այս անհիմն պատճառաբանութիւններուն հայկական կոտորածներ կը յաջորդէին : Չենք ուզեր խօսիլ և ցոյց տալ , թէ որքա՛ն խախուտ , որքա՛ն անտեղի և որքա՛ն անարժէք էին այդ պատրուակները , քանի որ այսօր ընդունուած և ողջմտօրէն հաստատուած իրողութիւն մըն է , թէ այդօրինակ շինծու պատրուակները ո՛չ մէկ իրաւունք կրնային տալ արդարասէր կառավարութեան մը — որպիսին ըլլալէ շատ հեռի էր Օսմ . կառավարութիւնը — անօրինակ վայրագութիւններով և հայաջինջ քաղաքականութեամբ սիսթէմաթիք ջարդեր կազմակերպելու հարստահարուած և իրաւագուրկ ժողովուրդներու ծոցին մէջ : Պէտք է խոստովանիլ սակայն , թէ Համիտեան նենգամիտ Քըլիբէին և ժողովրդեան մէջ գանուող նենգաւոր խուժանամուրհերուն համար , այդ յեղափոխական շարժումները , հարստահարուած ժողովուրդի մը իրաւածարաւ պահանջներուն , յուսահատական բողոքներուն անընդմիջական և անհրաժեշտ արդիւնքը՛ն ըլլալով հանդերձ , տակաւին իբրև պատրուակ գործածուեցան՝ այդ միևնոյն քաղաքական և կրօնական մոլեռանդներու ձեռքին մէջ հայերը աւելի ևս ճնշելու և հալածելու :

1908 Յուլիս 11/24 էն ի վեր հայերու ցոյց տրուած անկեղծ վերաբերումը դէպ ի նոր Սահմանադրական թուրքիտն և դէպ ի Օսմ . Հայրենիքին ամբողջականութիւնը այնքան ակներև է , որ այ-

ուօր այդ նախկին պատրուակները և շինծու պատ-  
ճառաբանութիւնները այլևս բացարձակապէս գո-  
յութիւն չունին և չեն կրնար ալ ունենալ գոնէ  
Հայերուն համար: Սահմանադրական ըէժիմին  
Թուրքիոյ մէջ հռչակուելէն յետոյ Հայերը եթէ  
յանցանք մը ունեցան՝ յաչս յետադիմական Թուրք  
տարրին, որ դժբաղդաբար ահաւոր Թիւ մը կը  
կազմէ տակաւին, այն ալ Օսմ. Սահմանադրական  
ըէժիմին իրենց անկեղծ և բոլորանուէր փարսւմն  
էր: Եթէ Հայերը յանցանք մ'ունեցան իրենց ան-  
ճին հանդէպ, այն ալ Սահմանադրական ըէժիմին  
վրայ իրենց չափազանց փտահուութիւնն էր, վըս-  
տահութիւն մը, թէ Սահմանադրական ըէժիմի  
տակ այլևս ջարդերն ու կոզոպուտները անկարե-  
լիութիւններ էին: Ազատութեան նախօրերուն Բե-  
րայի եկեղեցւոյն մէջ Թուրք նահատակներուն հո-  
գեհանգիստէն յետոյ Շիշլիի պարաէզին մէջ կա-  
տարուած բանախօսութիւններու պահուն Սելանի-  
կի զինուորականներէն հազարապետ Ահմէտ Պէյ  
խօսելով Ազատութեան հռչակումին մասին, կ'ա-  
ւելցնէր «Բանապետութիւնը սապաւեցաւ, բայց  
դեռ ողջ է, հազարաւոր վտանգներով շրջապատ-  
ուած է դեռ ազատութիւնը: Լաւատեսութիւնը  
կրնայ մեր.դիրքը վտանգել, յաջողելու առաջին  
պայմանը յոռետես ըլլալն է»: մենք Հայերս տարի-  
ներէ ի վեր անհունօրէն տառապած և արիւններու  
մէջ թաթխուած, Ազատութեան արչալոյսին այն-  
քան ծարաւի, այդ ցնծութեան օրերուն, շատ մի-  
ամիտ գտնուեցանք ու չի կրցինք վերլուծել ո՛չ  
վերոյիշեալ տողերու իմաստը և ո՛չ ալ մեզ շրջա-  
պատող սովորամուխ ժանին հոգեբանութիւնը:  
Եթէ այս չըլլար պարագան, եթէ մենք Հայերս  
քիչ մը աւելի շրջահայեաց գտնուած ըլլայինք, գո-

նէ հասկնալու չափ ա՛յն դաւադրութիւնները որոնք Սահմանադրական ընթիմի մը քողքին տակ կը սարքուէին ամբողջացնելու համար Համիտեան հայաջինջ քաղաքականութեան ծրագրին մնացորդ մասերը և եթէ Երկրին վարչութեան ղեկը իր ձեռքը բռնող Օսմ. Մ. և Յ. Գօմիթէն իր գործունէութեան առաջին օրերուն իսկ փափաքէր անաչառ, անկողմնակալ, անխտրական և իրապէս ժողովրդասէր ու երկրասէր արամադրութեամբ մը գործել, Հայրենիքին մէջ ու Հայրենիքին համար, ես վստահ եմ թէ սրտաբեկ ու աղեկատու հանդիսասեռը պիտի չըլլայինք ա՛յն վայրագութիւններուն և խժոժութիւններուն, որոնք Կիլիկեան Հայութիւնը փճացուցին և այնքան վաճառաչակ ու ծաղկած կեդրոններ մոխրակոյտի և գերեզմաննոցներու վերածեցին:

Պէտք է հասոգուիլ, թէ Ատանայի և Կիլիկիոյ շարդին ծրագիրը շատ հին է և պատրաստուած է դժոխային Երլտըզէն: Երկար տարիներէ ի վեր Կիլիկիո իր Ձէյթունով արդէն իսկ իր վրայ հրաւիրած էր թուրք քաղաքականութեան ու շադրութիւնը: Այդ ու շադրութիւնը աւելի ևս լարուեցաւ Ատանայի խողաց զարգացումով: Ներքին գաւառներու հարստահարուած և սովալլուկ ժողովուրդը իր բնագաւառին մէջ տիրող սովէն ու սրածութենէն յուսահատած հետզհետէ դէպի Ատանայի դաշտերը կուգար, հոն իր գործաւորի կեանքով պատառ մը չոր հաց գտնելու: Թուրք բռնապետութիւնը, որ ամէն միջոց ի գործ դնել որոշած էր զրկանքի և զուլումի մատնուած հայութեան առջև սպրեկու ամէն դիւրութիւն փակելու համար, արգիլեց այդ թշուառ գաղթականներուն դէպի Ատանա մուտքը, գաղթականներ որոնց համար կտոր

մը հացէն զատ քաղաքական ու է նպատակ, ու է ծրագիր գոյութիւն չուներ: Այդ արգելքով չի բաւականացաւ կառավարութիւնը. մէկ կողմէն Հալէպի մէջ հաստատեց Զինուորական արտակարգ հրամանատարութիւն մը, որ՝ անկախ տեղական և կեդրոնական քաղաքային և զինուորական Մարմիններէ, ուղղակի Պալատէն կախում ունէր, և միւս կողմէն դէպի Ատանայի դաշտը փոխարեց զանազան տեղերէ բերուած իսլամ գաղթականութիւններու ահագին շարք մը:

Մեծ ջարդերու և Զէյթունի շարժումներու ատեն, Ատանայի ազատումը կա՛մ այն է, որ պարզ վրիպում մըն էր, և կամ քաղաքական երկիւղի մը արդիւնքը, հաւանօրէն իր ծովամերձ դիրքին պատճառաւ: Բայց ծրագիրը ծրագիր ըլլալէն չի դադրեց աւրաւ: Չեմ գիտեր, թէ 1896—1904 շրջանին մէջ ինչ յարաբերութիւններ կատարուեցան՝ Ատանայի արիւնոտ ճակատագրին վերաբերմամբ՝ Ելլալի և Ատանայի կուսակալութեան միջև: Գիտենք միայն թէ կառավարութիւնը այդ միջոցին բռնի գրաւած է Տարսոնի Հայերուն պարսպապատ գերեզմանը, (\*) գիրենք զրկելու համար երևակայական ապստամբութեան? մը պահուն, հիւրընկալ բերդէ մը: Բայց եթէ այդ ութ տարիներու յարաբերութեանց էջերը անծանօթ կը մնան մեզի, գոնէ մեր պաշտօնավարութեան չորս տարիներու ընթացքին մէջ քիչ ու շատ կրցինք տեղեկանալ՝ ուղղակի թէ անուղղակի միջոցներով՝ այն մտադրութիւններուն, որոնք կը տածուէին շարունակ Ատանայի և շրջակայքին նկատմամբ:

---

(\*) Կ'ըսուի թէ այդ գերեզմանը Սարդանաբաղինը եղած ըլլայ:

Հալէպի իրարու յաջորդող Ֆէվզէլատէ Գօմանտանները, նախ Ալի փաշա, ու յետոյ Ֆէրիք Պէքիր փաշա, իբրև հաւատարիմ ծառաները Երլազլի Դահիճին, Զէյթունէն աւելի զբաղեցան Ատանայով և իր շրջակայքով, քանի որ Ատանայի մէջ կ'ամփոփուէր աժենաստուար հայութիւնը, իր տնտեսական և հողագործական բարգաւաճ կեանքով, և քանի որ Ատանայի տրուելիք հարուածը Կիլիկիոյ սրտին տրուած մահացու հարուածը պիտի ըլլար: Երլազլի և Ֆէվզէլատէ Գօմանտանութեան միջև կազմակերպուած արիւնոտ ծրագիրը արդէն իսկ իր ամբողջ ահաւորութեամբ պիտի գործադրուէր Ատանայի վրայ, մանաւանդ 906—907ին, եթէ Ատանայի նախորդ կուսակալ Պահրի փաշային երկրասէր և հայասէր քսոյքականութիւնը թեթև տկարացում մը ցոյց տար: Այդ օրերուն Ատանայի և շրջակայքին նկատմամբ չարամիտ զրտարտութիւններ կը շատնային:

Նախ, ժուռնալ մը կը տրուէր Պալատ, ըսելով թէ Ատանայի Առաջնորդը կ'աշխատի Անասուլուի ներքին գաւառներէն հայերը դէպի Ատանա փոխադրել, քսոյքական որոշ նպատակներով, հոն հայութիւնը շատցնելով ապստամբութիւն մը առաջ բերելու համար: Ամբաստանութիւնը նոյնութեամբ Պալատի կողմէն կը հաղորդուի Ատանայի կուսակալին, անկէ կ'արևոր բացատրութիւններ ստանալէ վերջ, պարտ ու պատշաճը տնօրինելու համար: Պահրի փաշա կը սրտնեղի այդ տեսակ չարամիտ տեղեկութիւններէ, և ինձմէ լսած բացատրութիւններուն վստահ, անմիջապէս կը հեռագրէ Պալատ, կը հերքէ եղած տեղեկատուութեան վստահելիութիւնը, եր հաստատէ Ատանայի բնիկ ու գաղթական հայ տարրին հաւատարմու-

Թիւնը : Կուսակալին կողմէ տրուած այս հաւատա-  
տիքը զինաթափ շըներ Ասանայի հայութեան բը-  
նաջնջումը ուխտող խմբակր . կ'աչրատուի անոնց  
կողմէն հայկական ապստամբութեան ? մը շինծու  
և արուեստական պատրուակին ներքեւ ամբողջ Կի-  
լիկիան ու մասնաւորապէս Ասանան Հայու արիւ-  
նով ողողել : Այս դժոխսային գործունէութիւնը ա-  
ւելի սուր կերպարանք մը կ'առնու այնպիսի ժա-  
մանակ մը , երբ Կիլիկիոյ մէջ հազիւ քանի մը հատ  
մատի վրայ համրուած յեղափոխականներ կային ,  
առանց յեղափոխական կազմակերպութեան , և ո-  
րոնք արդէն իսկ անգործութեան դատապարտը-  
ւած ըլլալով , չէին կրնար սեւէ պատրուակ տալ  
Հայութեան թշնամիներուն ձեռք : Հայերուն կող-  
մէ ի գործ դրուած խոհականութիւնն ալ տակա-  
ւին անզօր մնաց Երլարզի հաւատարիմներուն կող-  
մէն եղած հետապնդումը կասեցնելու համար :

Հալէպի Ֆէվքէլատէ Գօմանտան Պէքիր փաշա  
ամէն շաբաթ իր հեռագիրներով Երլարզի զեկոյց-  
ներ կ'ուտար , թէ Չոք-Մարզուանի հայերը ապրս-  
տամբութիւն պիտի հանեն , և ահա այս նպատակով  
իրենց պարտէզներուն շուրջ պարիսպ-պատեր կը  
կառուցանեն : Միւսոյն օրէն Հաճընէն կարգ մը  
զինուորականներ , Գայմագամի օգնականը և ու-  
րիշ քաղաքային պաշտօնեաներ մինչև Պալատ կը  
հասցնէին լուր մը , թէ Հաճնոյ մէջ յեղափոխա-  
կաններ ապաստանած են , քաղաքային ապստամ-  
բական շարժումի մը սկսելու համար : Միւսոյն օ-  
րերուն Մէրսինէն Թահրիրաթ միւտիւրիւ Ֆանի  
էՖ . որ կանխաւ արիւնոտ մասնակցութիւնը ունե-  
ցած էր Մարաշի և Զէյթունի շրջակայ Հայ գիւ-  
ղերու ջարդերուն , և որ մինչև վերջը հովանաւոր-  
ուած մնաց Համիտի Սէճճատէճի Պաշընէն , թէ' Կու-

սակալին ուղղակի, և թէ իր պաշտպանին միջոցաւ  
Երլտըզին տեղեկութիւններ կ'ուտար թէ Մէր-  
սինի մէջ Ձէլվէեաններու այգին յեղափոխական  
ներու ժողովատեղի և թաքստոց եղած է, թէ յե-  
ղափոխականներ ? Եւրոպացիներէ հովանաւորուած  
Մէրսինի օթելներուն մէջ գաղտնի գումարումներ  
կ'ընէին անիծեալ նպատակներու համար :

Միւսնոյն օրերուն նահանգին Ա. Գօմիսէր Քեա-  
ցիմ պէյ, Քէքլիքեան Արթինի մեզսակցութեամբ,  
կը ծրագրեն, հայերու տունէն ուսմբեր գտնելու  
պաւագրութիւն մը — անշուշտ իրենց կողմանէ  
դրուելէ յետոյ գտնելու պայմանաւ — և ստանկով  
Ատանայի Հայութիւնը իբրև ապստամբ և իբրև  
անիշխանական ներկայացնել : Եւ ասոնց ամէնուն  
իբրև լրացուցիչ մաս, Կիպրոսի մէջ գործող Երլ-  
տըզի գաղտնի գործակալը ամէն օր իր քաշած հե-  
ռագիրներով կ'ուզէր հաւատացնել Երլտըզի, թէ  
ամէն օր գունդագունդ յեղափոխականներ կը վա-  
զեն դէպի Ատանա, մասնաւորապէս վարձուած  
նաւակներով : Մինչդեռ այդ փախուստի ճամբով  
Ատանա մանողները ոչ թէ յեղափոխականներ, այլ  
հայրենակարօտ և որդեկարօտ գաւառացի հայեր  
էին, որոնց առջև երկրին դռները փակած էր Հա-  
միտեան բռնակալութիւնը, և որոնցմէ շատեր  
ձերբակալուելով ետ կը դարձուէին :

Կարմիր Սուլթանը, արդէն իսկ իր ծրագրի-  
ները գգուող ստորնաքարչ հաճոյակատարներէ ձուլ-  
ուած և հեագհետէ ստացած այս տեղեկութիւն-  
ները կրնար իր Վամբիրեան նպատակներուն ինը-  
պաստ գործածել : Ուստի իր ամբողջ կատաղու-  
թիւնը կը թափէ Ատանայի նախկին Կուսակալ  
Պահրի փաշայի վրայ, զինքը մեղադրելով իր ան-  
շըրջահայեցութեան համար, և յանդիմանելով ա-



նոր ապրիկարու թիւնը : Չէի գիտեր, թէ ինչ անցուղարձեր տեղի ունեցած էին այդ երկու օրուան մէջ, միայն սրոյ կը տեսնէի, թէ կուսակալը ընկճուած և հոգեկան անձկութեան մը տակ էր, ու երբ առանձին մնացինք բացաւ իր սիրտը, և այս բռնեցող խօսեցաւ ինձ հետ :

— «Երէկի տղաք ինձմէ առաջ անցան ընթացքով և պատիւներով, իսկ ես 30 տարիներէ ի վեր մնացի իմ դիրքիս և ընթացքով մէջ, միմիայն Հայերուն բարեկամ ըլլալու համար : Այս բարեկամութիւնը, որ իմ յետադիմութեանս պատճառն եղաւ, հիմա ալ իմ դիրքս անձս կը վտանգէ, ու Հայերը ապերախտութեամբ կը փոխարինեն իրենց ըրած բարիքներս» : Պահրի փաշա այս ըսելով իմ առջև կը նետէ այս խնդրոյն վերաբերեալ Երևանը գէն քաշուած հեռագիրներու ծրար մը :

Ամբաստանութիւնները ստայօղ էին, բայց միւսնոյն ժամանակ ծանրակշիռ : Ազգին գլխին հեռացրնելու համար ծրագրուած վերահաս փորձութիւնը, բոլոր ուժովս կը մաքառիմ այդ սխալ տեղեկատուութեանց դէմ, և ապահովիչ բացատրութիւններ տալէ յետոյ կուեկցնեմ,

— «Որպէսզի ձեզ համոզեմ որ տրուած տեղեկութիւնները սուտ են բացարձակապէս և զբրպարտութիւններ, ես անձնապէս կ'երաշխաւորեմ նահանգիս մէջ գտնուած Հայերու օրինաց հակառակ շարժման մէջ չի գտնուիլը : Եթէ հակառակ երաշխաւորութեանս սե է անախորժ դէպք պատահի, և եթէ այդ պարագային նախ զիս, և յետոյ Ատանայի անդորրութիւնը ինձմէ առաջ երաշխաւորող կաթողիկոսը սպաննել չիտաս վատ մըն ես իմ աչքիս» :

Պահրի փաշա ը խկորհի պահ մը, և ինք որ ա-

միս մը առաջ այս օրինակ հեռագիրներու տուած իր պատասխաններէն մէկով Հալէպի Պէքիր փաշան գառաւաճ, ու կիպրոսի գործակալը խարդախ անուանած էր. կարծես զսպանակէ մը մղուած, կանչելով իր քարտուղարը զրի առնել կ'ուսայ այն համբաւաւոր հեռագիրը, զոր Երլաբց ուղղեց, և որ վալիներու տարօգրութեանց մէջ եպսկան դէպքը պիտի մնայ: Ահա այդ համբաւաւոր հեռագրին գրեթէ տառական ամփոփումը:

— «Ատանայի նահանգին հայերուն վերագրուածները զրպարտութիւններ են միայն. անոնց հաւատարմութեան մասին բացարձակ վստահութիւն ունիմ. և արդէն այդ հաւատարմութիւնը երաշխաւորուած է Սիսի կաթողիկոսին և Ատանայի Հայոց Առաջնորդին կողմէն: Եթէ հակառակ այդ եկաշխաւորութեան, Բարձրագոյն կամաց հակառակ դէպք մը պատահի նահանգիս մէջ, նախ կաթողիկոսն ու Առաջնորդը պիտի սպաննեմ ու յետոյ անձնասպան պիտի ըլլամ»:

Այս դէպքերը տեղի կ'ունենային 907 Մայիսին, Այդ թուականէն վերջ Հայերուն համար նիւթուած զրպարտութիւնները իրենց թափը կը կորսնցնեն, և թէպէտ քիչ վերջը կաթողիկոսը Հաճնոյ մէջ Գայմագամին և իր փոխանորդին կողմէն, մեր Մէրսինի փոխանորդ Շահէ վարդապետ, կ'օգնէի մէջ Հազարապետէն անարգանք կ'ընդունէին, թէպէտ ես Օգոստ. 27ին Հաքիմին ներկայութեանը յարձակում մը կը կրէի Պահրի փաշայի կողմէն, թէպէտ Մէրսին, կ'օգնէ, Հաճըն, Չոք-Մարզուան ևլն. ծպտեալ ոստիկաններ և լրտեսներ կը զրկուէին, թէպէտ Սեպտ. 2ի գիշերը Սիհանի և Ճիհանի գետաբերանը զօրք կը զրկուէր առատ ոսգմամբերքով, իբր թէ ցամաք ելլելիք յեղափոխական

հրոսախուժւածքերու ? Դէմ պատերազմելու նպատակաւ , այսու հանդերձ պէտք է խոստովանիլ , թէ Պահրի փաշայի վերոյիշեալ հեռագիրը հին ուէժիմի օրով և երկար ատենի համար , արդէն իսկ ապահոված էր Ատանայի և շրջակայքի հայու թեան կեանքը :

Հոս անցողակի կերպով մատնանշել հարկ կը համարենք թէ Ատանայի և շրջակայքին մէջ , թուրք բնակչութիւնը միշտ խեթիւ նայած է Հայ տարրին հանդէպ , առաջնորդուած քաղաքներու և գիւղերու թուրք մեծամեծներէն , և իրենց ընչաքաղցու թեան ծարաւէն : Երկար տարիներէ ի վեր կառավարութիւնը ինքնին նշանակութիւն մը չէ ունեցած և այդ երևելիները իրենց ձեռք գործիք շինած են կաշառակեր և ապիկար պաշտօնէութիւնը , ծառայեցնելու համար կառավարութիւնն ու ստրուկ ժողովուրդն իրենց անձնական շահերուն : Ամէն քաղաք և գիւղ իր բռնապետը , իր աղան ունի , որոնց վրայ կը ծանրանայ բոլոր պատասխանատըութիւնը , գողութիւններու և մարդասպանութիւններու , քանի որ անոնք ամենավատ ամբոխապետները եղած են միշտ , իրենց կեանքի օրերուն մէջ : Ատոնք ցարդ գործնականապէս ցոյց տուած են , գանազան առիթներու և պարագաներու մէջ , Հայերու տնտեսային և ընկերային պարգացումին հանդէպ կարելի եղած բոլոր դժուարութիւններըն ու խոչնդոտները , ըլլան պաշտօնական թէ անպաշտօն : Մասնաւորապէս Ատանայի համար խօսելով , ըսենք թէ քաղաքին թուրք երևելիներէն Պաղտատի զատէ Ապաիւլգատիր և իր համախոհները , շատ կանուխէն նկատելով , թէ Ատանայի Հայութիւնը հրապարակի վրայ առևտրական ձեռնարկի մէջ գերակշռութիւն մը ձեռք բերելէ յե-

տոյ, հողագործական ասպարէզի մէջ ալ զարգանալու և յառաջդիմելու ամէն յարմարութիւն և ընդունակութիւն ունի, իրենց մէջ կը կազմեն իրմբակցութիւն մը, նպատակ սենեկալու ստեղծել իրենց համար նիւթական բացառիկ դիրքեր, ինչ միջոցաւ և գինով ալ որ ըլլայ: Եւ արդէն Ատանայի մէջ ու շրջակայքը չի կայ թուրք հարուստ մը, թուրք երևելի մը և թուրք էշրաֆ մը, որ իր հարստութիւնը, իր հողային ստացուածքը ապօրէն միջոցներով, յափշտակութեամբ և նոյն իսկ ոճիրներով ձեռք բերած չըլլայ:

Ատանայի ոճրագործ խմբակին առաջին և կարևոր գործը կըլլայ բոլոր պաշտօնի կոչուող կուսակալները և պաշտօնէութիւնը իրենց ազդեցութեան տակ առնուլ, հասնելու համար բուն նպատակին, որ է Հայութեան տնտեսական ցարգացումին խոչընդոտ հանդիսանալ, մէկ խօսքով փճացնել Հայութիւնը, Ատանայի նահանգին մէջ: Նախ կը սկսին Քրիստոնեայ ազարակներու մօտ թուրքեր սպաննել տալ, ու իբր ոճրագործ — սուս վկաներով — դատապարտել աալու ձեռնարկել հարուստ ազարակատէրեր, և այսպէսով անոնց փրճացումին պատճառ ըլլալ:

Այս միևնոյն սե խմբակը 95 — 96ի ջարդերու ընծայած առիթէն օգուտ քաղելու համար կը պատրաստուին Ատանայի մէջ ալ ջարդ կազմակերպել: Զինուորական Հրամանատարը կ'ընդդիմանայ: Թուրք խուժանին յարձակումը կը վանէ իր ձեռքին տակ գտնուած 150 զօրքով, և իբրև քաւութեան նոխազ, կը բանտարկուի միայն Կ. Կէօվատէրէլեան, Ապտիւլ Գաթիրի ամենամեծ հակառակորդը:

Ընդհանուր ջարդերու սե օրերէն քանի մը ա-

միս վերջ Պահրի փաշա Ատանայի կուսակալ կը կարգուի: Իր պաշտօնավարութեան առաջին օրէն սկսեալ Հայութեան հանդէպ իր բարեացակամութիւնը ցոյց կուտայ զանազան առիթներու մէջ: Պահրի փաշա իր ոստիկանի սուր թափանցողութեամբ զգալով թէ Ա. պառլէմ Գատիրեան խմբակը վտանգ մըն է նահանգին համար, կը յաջողի իր ատէով մը Ա. պառլէմ Գատիրն ու համախոհներն աքսորել զանազան հեռու սր վայրեր: Թէպէտ քանի մը ամիս վերջ պալատական պաշտպանութեան ու կաշառքի շնորհիւ աքսորականները կը յաջողին վերադառնալ, բայց ալ անոնք ժամանակի մը համար ուժասպառ եղած էին. անոնք աւելի ևս շտապուցին հայերուն դէմ իրենց ունեցած խուլ հակառակութիւնը տեսնելով մանաւանդ, թէ Պահրի փաշա գոհացում կուտայ Հայ Առաջնորդարանի բոլոր դիմումներուն, թէ իր բարեացակամութեան շնորհիւ Հայ ազգային կեանքը կը շինուի և այդ իսկ բարեացակամութեամբ հայերու իրաւունքները կը պաշտպանուին, իրենց և իրենց արբանեակներու ապօրէն ոտնձգութիւններուն դէմ:

Իմ և Պահրի փաշայի միջև գոյութիւն ունեցող բարեկամութիւնը և այդ բարեկամութեան շնորհիւ կառավարական շրջանակներու մէջ մեր Առաջնորդարանին ձեռք բերած հեղինակութիւնը պատճառ եղաւ որ Պահրի փաշայի դէմ նիւթուած ամբաստանութիւններուն իմ անունս ալ կցուէր շարունակ: Այդ «Մուխպիրի սատրգ» ոտորագրութեամբ արուած զրպարտագրերէն մէկուն մէջ մեր Մայր-Եկեղեցւոյ նորաչէն Ղանգակատունը՝ որ միմիայն Պահրի փաշայի բարեացակամ թոյլաբուութեամբ շինուած էր՝ կը ներկայացուի իբրև աշտարակ մը, ուրկէ կտրելի պիտի ըլլար իբր թէ Ա. սա

նայի թուրք հաստատութիւնները ռմբակոծել ?  
հայկական ենթադրական ապստամբութեան մը  
միջոցին : Սուլթանի կառավարութիւնը այնքան  
կարևորութիւն կուտայ այդ ամբաստանագրին , որ  
երբ Պահրի փաշայի մասին եղած գանգաւները  
քննելու պաշտօն ունեցող Յանձնախումբ մը կը  
ղրկուի Պոլսէն , 906ին , մեր եկեղեցւոյ գանգաւա-  
տունն ալ կուգայ քննել , անշուշտ տարբեր պատ-  
րուակի մը ներքե : Հակառակ իրենց չարամիտ  
ջանքերուն , սակայն , այդ սճրագործ խմբակը երբ  
տեսաւ , թէ Պահրի փաշայի օրով բացարձակապէս  
անհնարութեան պիտի բաղխի իր հայատեաց նպա-  
տակներուն գործադրութիւնը , քծնումի և սոսոր-  
նութեան դիմակին տակ , պահել ջանացին իրենց  
հայատեաց նպատակները , անոնց գործադրութեան  
հնարաւորութիւնը վերապահելով յարմարագոյն  
առիթի և իրենց ձեռքին , կամքին խաղալիք կու-  
սակալի մը գալուստին :

\* \* \*

Բռնապետական ընթացի տապալումով Սահմա-  
նադրութեան հռչակուած պահուն արձակուրդով  
Պոլիս երթալու պահուս Գոնեայ կը գտնուէի : Եւ  
թուրքիոյ այդ երջանկաբեր օրերուն գրեթէ երե-  
քուկէս ամիս (Յուլիս 7/20 — 16/29 Հսկտեմբեր)  
բացակայ մնացի պաշտօնատեղիէս : Այդ բացակա-  
յութեանս միջոցին Ատանայի մէջ և շուրջը տեղի  
ունեցած կարգ մը դէպքեր կուզենք մէջ բերել  
հոս , իրենց յատկանշական հանգամանքին համար :  
Ազատութեան ըմբռնումը կարգ մը չարաչա-  
հութիւններուն և անձնական քինախնդրութիւն-  
ներու միջոց գործածելով , ոմանք կը ձեռնարկեն  
Պահրի փաշայի վտարման : Այս գործին գլուխ կը

կանգնի իթթիհատի ինքնակոչ նախագահ Իհսան Ֆիքրի, իր հաճախողներով, հակառակ որ ինք երկար տարիներէ ի վեր Պահրի փաշայի հայրական հոգածութիւնն ու բարիքները վայելած էր: Այդ միևնոյն խմբակը արդէն իսկ կարգ մը անձնական նկատումներով լեցուած ինծի դէմ, ձեռքը պատրուակ բռնելով Եանեսայի Գօմիթէի մասնաճիւղէն՝ Սահմանադրութեան հռչակումը շնորհաւորող՝ իմ հասցէիս քաշուած հեռագիր մը, կարգ մը վայրահաշուութիւններով կուզէ զիս վարկաբեկել իմ ժողովուրդիս առջև:

Կարգ մը ցածոգի արարածներ իրենց նկարագրի և բարոյականի աղտեղութիւնները ծածկելու համար կը կազմեն «Իթթիհատ Թէրագգը» Ստանայի մասնաճիւղը: Այդ կազմակերպութեան կը մասնակցին բաւականաչափ պարկեշտ հայեր, միմիայն ցոյց տուած ըլլալու համար թէ իրենք անկեղծօրէն բարեկամ են Սահմանադրական Թուրքիոյ, և փոփաքող Հայ և Թուրք եղբայրակցութեան: Միևնոյն ժամանակ մէջտեղ կ'ելլէ Ապաիւլ-Գատիր իր խմբակով և հեռի Սահմանադրական ցոյցերէ ու երևումներէ, իր շուրջ կը հաւաքէ Ատանայի ամենէն ոճրագործ և բարոյական երաշխաւորութենէ զուրկ ու ամեն տեսակ աղտոտութեանց իրենց մասնակցութեամբը ծանօթ իտալիացիներ, և Սալճիներ կոչուած ստահակներ, սօֆթմաներ ևն որոնց համար Սահմանադրութիւնը աղէտ մըն էր, և կը կազմէ «Զրաթ Գլիւպի» անուան ներքև տեսակ մը կուսակցութիւն, որ հակառակ իր անունին, Երկրին կործանումը նիւթող դաւաճան չեղբոնը պիտի ըլլար քանի մը ամիս յետոյ:

Պահրի փաշայի մեկնումէն առաջ արդէն իսկ

փոխուստ կուտայ ստիկան-զօրաց հրամանատարը, որ Պալատան Բ. Քարաուղար Իզգէթի ազգականն էր, իսկ Պահրի փաշայի մեկնումէն յետոյ կուսակալութեան պաշտօնը փոխանորդ արար վարող Միրլիվա Ալի փաշայի օրով և նորակազմ Մ. և Յ. Գօմիթէի ազգեցութեան տակ պաշտօնէ կը հեռացունին կարգ մը պաշտօնեաներ, կեդրոնը և շրջակայքը, որոնց մէջ կը գտնուին Փօլիս Միտիրի Քեազիմ Պէյ և Գօմիսէր Զօր Ալի:

Թուրք ժողովուրդին մէջ տեղի ունեցող սոյն փոփոխութիւններուն և կազմակերպութիւններուն զուգահեռաբար հայկական շրջանակին մէջ ալ կը կատարուին կարգ մը կազմակերպութիւններ, նըպասակ ունենալով միմիայն ժողովրդեան ինքնագիտակցութիւնը արթնցնել, զգացնել Սահմանադրութեան բարիքները, ժողովրդին ներշնչել հաւաքաբար և զանազան ազգաբնակչութիւններու հետ համերաշխաբար զարգանալու պէտքին կարեւորութիւնը և ի հարկին թուրք ողջամիտ և Սահմանադրասէր տարրին հետ ձեռք ձեռքի տուած պաշտպանելու Սահմանադրական Հայրենիքը ու է յետադիմական շարժումի դէմ. ներշնչուելով Մայրաքաղաքին մէջ Հայ և Թուրք կուսակցութեանց միջև կազմուած համերաշխութենէն: Մեր բացակայութեան միջոցին Ատանայի և շրջակայքին մէջ կազմուած այսօրինակ մարմիններէն երկուքը, շընչակեան և Դաշնակցական Գլիւպները, արդէն իսկ շարունակութիւնն են Մ. և Յ. Գօմիթէի հետ համերաշխաժ կազմակերպութեանց, որոնց գոյութիւնը սահմանադրական բէժիմի մը օրով և Օսմ. Ընդհ. Եղբայրակցութեան ծոցին մէջ քաղաքական ու իցէ անպատեհութիւն չէր կրնար ներշնչել, հակառակ Համիտեան շրջանին հալածուած ըլլալ-



նուն : Որովհետև հակառակ այս կազմակերպութիւններուն կրած «Յեղափոխական» անունին , անոնք դադրած էին յեղափոխական - դաւադրական նպատակներ ունենալէ , նոյն իսկ իրենց պաշտօնական յայտարարութիւններով , և քաղաքականապէս իրրև ազատական և ընկերավարական տեսակէտով իրրև Ընկերավարականներ կ'ուզէին գործել : Ասոնցմէ դուրս կազմուած էր «Հայկական համագգային լսարան - ընթերցատուն»ի կազմակերպութիւնը , որուն միակ ու միակ նպատակը եղած է ընթերցասիրութիւնը տարածել ժողովուրդեան զանազան խաւերուն մէջ , հեռի քաղաքական ու է ծրագրէ : Այսօրինակ ընթերցարանական հաստատութիւններ սկսան գոյութիւն ունենալ նաև Հայ ուրիշ յարանուանութիւններու և Յոյն հասարակութեան մէջ :

Բայց սահմանադրական բէթիմին ժողովուրդեան մտքին մէջ արթնցուցած անխառն սերտութիւնը հազիւ մէկ ու կէս ամիս կը տևէ : Եւ կ'սկըսի խուլ կերպով ծայր տալ մէկ կողմէն հակասահմանադրական շարժումը , և միւս կողմէն Հայերու հանդէպ ջարդի սպառնալիքը :

Բոլոր թուրք մեծամեծները , որոնց ապօրէն շահերը կը վտանգուէին Սահմանադրութեան բերած արդարութեան ? սկզբունքներով , և որոնց դէմ մերթ խուլ և մերթ յայտնի հալածանք մը հանուած էր թուրք , Հայ և Յոյն տարրերէ կազմուած Մ . Յ . Գօմիթէի կողմէն , կը սկսին մութի մէջ համախմբուիլ և գինեւ իրենց ձեռքին տակ զըտնուած սճրագործ ստահակները : Թուրք գինավաճառները շարունակ և մեծաքանակ գէնք կը փոխադրէին : Ատանայի մէջ և շրջակայքը ոչ մէջ Հայ գինավաճառ գոյութիւն չունէր : Երկիրը անիշխա-

նական վիճակի կը մատնուի բոլորովին : Կառավարութիւնը անուանական բան մըն է , ու բնաւ հեղինակութիւն չունի ժողովրդական շարժումին վերայ : Ատանայի Հայ ժողովուրդը առևտուրի և հողագործութեան խաղաղ կեանքին վարժուած մինև այն առեւն , ու ի բնէ անվարժ զէնքի և ինքնապաշտպանութեան ոգորումի կեանքին , շա՛տ քիչ կարևորութիւն կուտայ իրեն շուրջ տեղի ունեցող թուրք խուժանական զինումին , և իրեն հասցէին նետուած ջարդի սպառնալիքներուն : Այդ սպառնալիքը՝ սակայն՝ հետզհետէ տարածուն հանգամանք մը կ'առնու թուրքիոյ մէջ : Սահմանադրասէր Գօմիթէն մինչև արեան վերջին կաթիլը թափելով Սահմանադրութիւնը պահելու յորդոր կը կարգայ ժողովուրդին . ամբողջ թուրքիոյ օրագրութիւնը վտանգը կը մատնանչէ , և Հայ թերթեր ջարդի սպառնալիքին առջև սահմանադրասէր Հայ ժողովուրդին անձնապաշտպանութեան կենսական պէտքը կը մատնանչեն : Այս տեսակ ահաւոր վայրկեանի մը մէջ Սահմանադրութեան պաշտպանութեանը համար , զսհողութենէ ընկերկիլը անորակելի վատութիւն մը պիտի ըլլար Հայ տարրին համար , քանի որ իր ճակատագիրը , իր պարկեշտ և առաքինի քաղաքացիի ճակատագիրը , և իր վաղուան ապահովութիւնը Սահմանադրութեան հետ կապուած էր : Սահմանադրութեան պահպանումին համար զսհարերուիլ գիտնալ , կը նշանակէր ինքնապաշտպանութեան պատրաստուիլ . Սահմանադրութիւնը փրկել , իր առջը փրկել կը նշանակէր : Այդ գիտակցութեան առջև անտարբեր գտնուիլ դժխեմ բաղդին հարուածը փութացնել կը նշանակէր . հետևաբար հայերն ալ տակաւ զէնքի գնումներ ընել կը սկսին : Հայրենիք , Սահմա-

նադրութիւն , անձ , պատիւ նուիրական բաներ են .  
անձնապաշտպանութեան գործը նուիրական է ա-  
նոնց չափ : Հայերը իրենց դէմ եղած ջարդի ըս-  
պառնալիքին և թուրքերու պատրաստութիւննե-  
րուն սկսած էին կամաց կամաց կարևորութիւն  
տալ , որովհետև Սահմանադրութեան հռչակումին  
օրը Ատանայի Ինձիրլիք գիւղի մէջ հայերու վրայ  
թուրքերու կողմէն գործուած արիւնոտ յարձա-  
կում մը հետզհետէ հայերուն զգալ կուտար թուրք  
մեծամեծներուն և խուժանին վայրագ և հակա-  
սահմանադրական հոգեբանութիւնը : Թուրքեր ,  
որոնք մինչև այն ատեն ստրուկ Հայեր միայն գը-  
տած էին իրենց դէմ , կը սրանեղին անոնց գինուե-  
լու հակումը ատենելով , և կարգ մը տարածայնու-  
թիւններ կը սկսին շրջան ընել ժողովրդական խա-  
ւերուն մէջ : Այդ տարածայնութիւններու լբրև  
պատասխան Աւստրիական ապրանքներու դէմ ըլ-  
լալիք պօքօթի միթիւնկին մէջ Կէօվտէրէլեան սա-  
բառերով կը խօսի ժողովուրդին . — «Ժողովրդեան  
մէջ շրջան ընող տարածայնութեան մը համօձայն  
իբր թէ Ապտիւլ Գասիր էֆ . թուրքերը և ես հա-  
յերը կը գինենք , այս տարածայնութիւնը սուտ է ,  
մի հաւատաք » : Կէօվտէրէլեանի մասին խօսուածը  
հիմնովին սուտ մըն էր ստուգիւ , որովհետև ո և  
իցէ հեղինակութիւն կամ ազդեցութիւն չունէր և  
չէր կրնար ունենալ մեր ժողովուրդին վրայ . Ապ-  
տիւլ Գասիրի պարագան դժբաղդաբար ահաւոր  
ճշմարտութիւն մըն էր , քանի որ ինք և իր հա-  
մախոհները պէտք եղած նիւթական ուժը և անձ-  
նական ահագին ազդեցութիւնը ունէին խուժանին  
վրայ : Կը մօտենան պայրամի օրերը , Հայ ժողո-  
վուրդը նահանգին մէկ ծայրէն միւսը ջարդի ըս-  
պառնալիքին տակ սահմուկած , ի գուր տեղական

կառավարութիւններու դիմում կընէ . իրենց սար-  
սափը թարգմանող նախնիներ կը հասցնեն Առաջ-  
նորդարան : Համիտիյէի դաշտին մէջ Քէօր Գույու  
կոչուած տեղէն Չօգ Մարգուանցիներուն ամ-  
բողջ նախիրը կը քշուի կը տարուի : Օճագլըի մէջ  
Կէօվճեաններու ջրաղաց գործարանը հրացանի կը  
բռնուի թուրքերու կողմէն : Եւ ուրիշ օր մը , աւ-  
շար և քիւրացեղերու կողմէն Օճագլըն կը պաշար-  
ուի , թալլելու նպատակաւ , և Օճագլըցիները Չօք  
Մարգուան կը փախչին : Կիլիկիոյ Կաթողիկոսին կող-  
մէն ջարդի սպառնալիքներուն գոյութիւնը ցուցնող  
և անհիշական օգնութեան պէտքը զգացնող հե-  
ռագիրներ կը տրուին Պոլիս և գաւառին կեդրոնը :  
Այդ սարսափի ճգնաժամերուն մէջ է , որ Ատա-  
նա կը հասնի Կուսակալ Ճէվատ պէյ : Նոր Կուսա-  
կալին Ատանա հասնելիք օրը Ապտիւլ Գատիրի ար-  
բանեակներէն իտլիպցիներ սա յայտարարութիւնը  
կ'ընեն շուկայի և հրապարակներու վրայ . « Կանանց  
շուկայ ելլել և առետուր ընելը Շէրիաթը Մուհամ-  
մէտիյէի հակառակ ըլլալուն , իսլամ և Քրիստոնե-  
այ իսանութեաններուն կը յանձնարարենք , թուրք  
կիները իրենց իսանութները չընդունիլ , հակառակ  
պարագային քաշկռտելով դուրս պիտի հանենք » :  
Նոյն օրը կը հասնի Կուսակալը : Ապտիւլ Գատիրի  
կարգադրութեամբ և սճրագործ Արապ Մահմուտը  
բանտէն արձակել տալու պետրուակին տակ , նոյն  
գիշեր ցոյց մը կը կազմակերպուի , ուղղակի նպա-  
տակ ունենալով վալին Ապտիւլ Գատիրի անմիջա-  
կան ազդեցութեանը ենթարկել և վայրկեան մը ա-  
ռաջ ի գործ դնել հայերուն և Սահմանադրութեան  
դէմ իրենց անուցած արիւնոտ նպատակը : Կուսա-  
կալ Ճէվատ պէյ այդ ցոյցի պահուն կտրուկ և կո-  
րովի ընթացք մը ցոյց կուտայ , զինուորական ու-

Ժին հրամայելով ցրուել խաժամուժը, բայց միև  
օր, հակառակ գոյութիւն ունեցող սպառնալիքին  
և հակառակ հայերու սարսափին, վատութիւնը  
կ'ունենայ հեռագրով մերժելու Կիլիկիոյ Վեհ. Կա-  
թողիկոսին կողմէն ցոյց տրուած խուժանական հո-  
գեկան վիճակը, և երկրի հայերուն տազնապալից  
կացութիւնը, հակառակ որ ինքն ալ զինուոր ու-  
զած էր Շամէն:

Պայրամին Ե. ըզ օրը եշ. երեկոյին Ատանա կը  
հասնէի երեք ու կէս ամսու երկար բացակայու-  
թեանէ մը յետոյ: Եւ հասած երեկոյիս իսկ Կարսէն,  
Պաղլէէն, Նաճառլըէն, Շէյխ Մուրատէն եկած  
փայեկներ և նամակներ կը գտնէի Առաջնորդարան,  
որոնք ջարդի սպառնալիքէն ազատելու համար մեր  
օժանդակութեան կը դիմէին: Միևնոյն երեկոյին  
Կարսի մէջ գտնուած լատին կրօնաւորներ իրենց  
յուսահատ կացութիւնը պարզող նամակ մը կը  
հասցնեն Մէրսինի իրենց Հիւպատոսարանին: Խըն-  
դիրը ծանրակշիռ էր, գիշերանց Կուսակալին կը  
դրկեմ մեր փոխանորդը, խնդրելով որ կառավա-  
րութիւնը պաշտպանէ այդ անգէն ժողովուրդը  
թուրք խուժանին մոլեռանդութեան դէմ: Որով-  
հետև մինչև այդ պահը Պոլիսէն հրաման տրուած  
էր ու և իցէ շփոթութեան տեղի տուողները հրա-  
ցանի բռնել, Կուսակալը անմիջապէս կտրուկ հրա-  
մաններ կուտայ և առժամաբար ջարդի ծրագիրը  
կը մնայ իր սաղմնային վիճակին մէջ:

Երբ այդ տազնապալից օրերուն Ատանայի մէջ  
Ապտիւլ Գատիրի և իր համախոհներու զրդումով  
սասթճի Մուհէտտին և իր գազանաբարոյ ընկեր-  
ները շուկային մէջ կը պօռային «Կեավուրլար սիզի  
գըրաճաղըզ», անդին Հաճնոյ նախորդ Միւֆթիի  
աղան Քէօր Ահմէտ թուրք գիւղացիներու նամակ-

ներ կը դրկէ հրահանգելով զիրենք ջարդել շրջա-  
կայ հայ գիւղերը, և պայրամի օրը գուլ Հաճըն և  
կոտորածը սկսիլ : Այդ նամակներէն մին կը բըռ-  
նուի Հաճնոյ գայմագամ Արաբ-Օրթոտոքս Ապաիւլ  
Հալիմ պէյի աջալրջութեան շնորհիւ : Խնդիրը Սի-  
սի և Ատանայի իշխանութեանց կը յանձնուի, ըս-  
պասելով որ Հայրենիքի այսպիսի վատթար թշնա-  
մի մը խստիւ պատժոյ ենթարկուի : Կառավարու-  
թիւնը թոյլ կը մնայ, Մ. և Յ. Գոմիթէն անուղ-  
ղակի միջոցներով կը պաշտպանէ ոճրագործը,  
Քէօր Ահմէտ քանի մը օր բանտարկուելէ վերջ,  
առանց օրինական դատապարտութեան կ'արձակուի  
բանտէն . իր նամակներուն թելադրութեան տակ  
սպաննուած երկու Հաճընցիներու ոճրագործները  
չեն ձերբակալուիր, և ասոնց ամենուն իբրև ար-  
դիւնք քանի մը ամիս վերջը պաշտօնանկ կըլլայ  
Հաճնոյ Գայմագամը, ի պատիժ իր արդարասիրու-  
թեան : Միևնոյն օրերուն անդին Պաղչէի մէջ Միւֆ-  
թի Իսմայիլ էֆ. իր եղբայրը Եուսուֆ և իր գա-  
ղափարակիցը Կիւվէլի օչլու Ալի միևնոյն բառե-  
րով կը սպառնան հայերուն, (\*) ու հոս ալ Առաջ-  
նորդարանի կողմէն եղած դիմումներուն վրայ ջար-  
դի սպառնալիքին գործադրութիւնը կը խափանուի :

Ատանա վերադարձիս երբ այդ կոտորածի ըս-  
պառնալիքները ահաւոր համեմատութիւններ ա-

(\*) Այս պարագաները ընդարձակօրէն պատ-  
մուած են, մեր Յունուար 10 թուականով թուր-  
քերէն տեղեկագրին մէջ, որուն օրինակները զըր-  
կուած են ժամանակին Մեծ Եպարքոսին, Երեսփ.  
Ժողովոյ Նախագահին, Արդարութեան և Ներքին  
Գործոց Նախարարներուն, ինչպէս նաև Կիլիկիոյ  
Կաթողիկոսին և Պոլսոյ Ա.գգ. Պատրիարքարանին :

ուած էին, ամենէն ցաւալի և ամենէն աւելի տագ-  
նապեցուցիչ պարագան, որ աչքիս զարկաւ սատր,  
թէ սահմանադրական, ազատ և իբր թէ արդար  
ընթերցի մը օրով Ատանայի նման կարևոր նահան-  
գի մը կուսակալութեան պաշտօնը յանձնուած էր  
Երլաւըզի պալատին էն թրիկներով և  
հայաջինջ ու երկրակործան քաղա-  
քականութիւնովը խմորուած ՃէՎԱՏ  
ՊէՅի մը. նահանգին հրամանատարութիւնը յանձ-  
նուած էր երէկի Երլաւըզի դժոխային  
ծրագիրներուն գործիք և Մարաշի 95—  
96ի ջարդը կազմակերպող Ֆէրիք Մուսթաֆա  
Րէմզի փաշայի, որ կարծես Ատանա կը դրկուէր  
Զէյթունի մէջ իր կրած պարտութեան վրէժը լու-  
ծելու, և Ոստիկան—Զօրաց հրամանատարութիւնը  
յանձնուած էր Ահմէտ պէյանունով, իր պաշտօ-  
նին գիտակցութիւնը չունեցող, անուս, մոլեռանդ  
և բռնապետութեան բոլոր գարշութիւններով ա-  
պականուած մէկու մը: Ահա ա՛յն երրորդութիւ-  
ր, որ իր ստորադաս պաշտօնէութեան հետ հո-  
վանաւորուած, դիւրացուցած և մասնակցած է  
Նահանգին կեդրոնին մէջ սկսած և միևնոյն պա-  
հուն ճիւղաւորուած Ատանայի մեծ ջարդին:

\* \* \*

Ատանա վերսդարձիս նկատելով թուրք մուե-  
ռանդութեան զբգռումը և միւս կողմէն Հայ ժո-  
ղովուրդին սորսալին ծանրութիւնը, ու խորապէս  
համոզուած ըլլալով, թէ Երկրին խաղաղ զարգա-  
ցումը Սահմանադրութենէն կախումն ունի և Սահ-  
մանադրութեան պահպանութիւնը տարբեր ազգա-  
բնակութիւններու համերաշխութենէն, 908 Հոկտ-  
25 թուականաւ կոնդակ մը ուղղեցի ժողովուրդին

չեղանակով համերաշխութեան պէտքը և ցոյց տալով ա՛յն միջոցները, որոնցմով կարելի պիտի ըլլար նպատաւորութիւն Սահմանադրութենէն: Հոս կը դնենք այդ կոնդակին կարևորագոյն հատուածը:

«Նախկին բռնապետական ընդհանրացումը սա ազատութիւնը, մասամբ կուգայ գոհացում տալ մեր Հայուն և Օսմանցիի փափաքին: Բայց ազատութիւնը ինքնին նշանակութիւն պիտի չունենար, եթէ արդարութիւնը և ընկերական հաւասարութիւնը չի գան չամբողջացնեն ա՛յն քաղաքական երրորդութիւնը, որ պետութիւններու և ազգերու ճակատագիրը պիտի փայլեցնէ քաղաքակրթութեան և յառաջդիմութեան հորիզոններուն վրայ: Ազատութիւնը առաջին պտուղն է բռնապետութեան ջնջումին: Պէտք է պահպանել, սընուցանել, մեծցնել գանիկա, որովհետև այդ ազատութենէն պիտի ծնին մեզի գոհացում տալու կոչուած արդարութիւնը և ազգերու հաւասարութիւնը: Չի շփանանք մանուկ ազատութենէն, չի զեղծանենք անով, այլ ջանանք լրջօրէն նպատաւորութիւն անկէ մտաւորապէս և տնտեսապէս զարգանալու համար: Օսմանցի ժողովուրդներու, ընդհանրապէս, ու հայերուն համար մասնաւորապէս ազատութիւնը նպատակ մը չէ, այլ միջոց մը աւելի բարձր նպատակներու հասնելու համար: Սրբարութիւնը և ընկերական հաւասարութիւնը այդ բարձր նպատակները կազմող տարրերն են: Եւ որչափ ասոնք անոնք մեռած տառեր մնան, ու անիրաւութիւնը, աչառութիւնն ու ցեղային խտրութիւնը տիրեն կառավարական ու ժողովրդական շրջանակներու մէջ, մենք պէտք է գիտնանք, թէ տակաւին հասած չենք մեր նպատակին:

Այսօրուան Օսմ. Սահմանադրութիւնը անկա-



րող է գոհացում տալ Օսմ. Հայրենիքի տարբեր ազգաբնակութիւններուն: Բայց յոյս ունինք, թէ կ'սգմուելիք Երեսփ. Ժողովը, իրապէս հայրենասիրակ սն զգացումներէ դրդուած, փրկելու համար Օսմ. Հայրենիքը ապագայի անորոշութիւններէն, պիտի ջանայ մեզի տալ նոր և լիակատար Սահմանադրութիւն մը, ուրկէ ամէն ազգ ու ամէն ժողովուրդ հաւասարապէս պիտի կրնայ օգտուիլ, և անկաշկանդ զարգանալ Օսմ. Պետութեան ու Հայրենիքին փառքին համար: Հայ ժողովուրդը ի բնէ ուշիմ, և աւելի ընդունակ քաղաքակրթութեան բարիքներու, յոյս ունինք, թէ իր ցեղին պատմական յատկութիւնները երևան պիտի կրնայ բերել, և գործնականապէս ցոյց տալ, թէ ինք ո՛չ միայն նահատակուելի գիտէ, և անձնագոհուելի արդարութեան դատին համար, այլ և գիտէ ազատութիւնը պարկեշտօրէն և ուղղամտօրէն գործածել և անոր իրապէս արժանի ըլլալ: Այս պարագան ազգի մը ապագային համար ամենակենսական խնդիր մըն է:

Քանի որ ազատութեան հռչակումով այլ ևս Օսմանցի բոլոր ազգերու շահերը նոյնացած են, և այդ ազատութիւնը պահպանել նուիրական պարտքերնիս է, կը յանձնարարեմ, որ՝

1.— Տեղւոյդ Թուրք ժողովուրդներու հանդէպ բարեացակամ տրամադրութիւններ ունենաք: Իրաւ է թէ անոնք ասկէ առաջ մեզի շատ ու շատ գրկումներ ըրին, բայց անոնք պատասխանատու չէին իրենց ըրածներուն: Երլաըզի արիւնարբու խմբակը եղած է այդ կատարուած բոլոր ոճրագործութիւններուն հեղինակը: Մէկ կողմ թողունք վրէժխնդրութեան զգացումները, որովհետեւ եթէ բռնապետութեան արգասիքը վրէժխնդրութեան

զգացումն եղաւ, ազատութեան պտուղը սէրն է, և իբրև բարեկամ և իբրև մէկ Հայրենիքի զաւակ ապրինք թուրքերուն հետ, որչափ ատեն սահմանադրասէր ըլլան անոնք: Եւ սիրով և համերաշխութեամբ ինքզինքնիս նուիրենք մեր երկրին, մեր Օսմ. Հայրենիքին յառաջդիմութեանը:

2 - Պղտոր ջուրի մէջ ձուկ որսայու տրամադիր վատ մարդեր պիտի գտնուին շարունակ մեր շուրջը, որոնք պիտի ջանան ահ ու սարսափի մէջ պահել ժողովուրդը, և խռովել ազատութեան պարգևած Երկրին խաղաղութիւնն ու անդորրութիւնը: Ես վստահ եմ, թէ քանի որ Երկրին արդի ազատական վարչութիւնը և բանակը բարեկամ են ազատութեան, այդ վատ և շահախնդիր մարդիկ պիտի չի յաջողին բնաւ իրենց չար մտադրութիւններուն մէջ: Անոնց ականջ մի՛ դնէք, և արթուն մնալով ձեր և երկրին շահերուն պաշտպանութեանը համար, ձեր գործովը պարապեցէք: Ամեն պարագայի մէջ օժանդակեցէք տեղական կառավարութեան, երկրին անդորրութիւնը պահպանելու համար: Եւ գործնապէս ցոյց տուէք, թէ Օսմ. Ազատ Հայրենիքին հանդէպ մեր տածած յարգանքը և թուրք հայրենակիցներու հանդէպ մեր բարեացակամութիւնները անկեղծ են և տևական:

3 - Եթէ երբէք անհատական կամ հաւաքական զրկումներու և անիրաւութեան հանդիպիք, համարձակ և աներկիւղ դիմեցէք տեղական կառավարութեան, և երբ ձեր դիմումները ապարդիւն կամ անլսելի մնան, դիմեցէք ուղղակի Առաջնորդարանիս, որ միշտ պատրաստ եղած է, ինչպէս բռնապետութեան, նոյնպէս ազատութեան օրերուն մէջ, ձեր ցաւերովը հետաքրքրուիլ և պաշտպանել ձեր իրաւունքները: Միայն թէ ան-

հրաժեշտ է, որ թէ՛ կառավարութեան և թէ՛ Առաջնորդարանս ըլլալիք դիմումներուն մէջ ո՛չ չափազանցութիւն և ո՛չ ալ սուտ ու սխալ գանուին: Պէտք է խնդիրները ներկայացուն իրենց իսկականութեանը և պարզութեանը մէջ:

4.— Մեր ժողովուրդն ալ իր մէջ ունի ազէտներ, պէտք է անմիջապէս տեղական լսարաններ կազմակերպել, արանց և կանանց համար, նոյն իսկ գիշերային վարժարաններ՝ շուկացիներու համար, և ոչ միայն անոնց պարզել մեր արդի վիճակը, անկէ ծնելիք օգուտները և մեր ազգային կեանքը, մեր հասցեութիւնը, այլ և շարունակ վառ պահել հայութեան ազգային զգացումը մեր ժողովուրդին սրտին և հոգիին մէջ: Եւ եթէ այդ լսարաններուն թուրք հայրենակիցներ ալ գան ունկնդրել, զանոնք ալ հրաւիրեցէք:

5.— Ոյժ տուէք ձեր վարժարաններու, ասկէ վերջ ապագան արժանիք ունեցողինն է: Եւ դըպրոցներն են որ այդ արժանիքը պիտի շինեն մարդուն մէջ: Մինչև ցարդ մեր վարժարանները ճընշումի ենթակայ էին, և թուրքիոյ բոլոր վարժարաններուն պէս, պարզապէս ցոյցի նուիրուած էին: Պէտք է հիմա հիմնական կրթութեան ձեռնարկել, և պատրաստել ներքին մարդը՝ ցորաւոր, տոկուն, գիտակից և իր երկրին լեզուն և օրէնքները գիացող մարդը:

Եւ այս ամէնը ընելով է, որ մենք ոչ միայն գնահատած պիտի ըլլանք մեր այս օրուան ազատութիւնը, այլ և փութացուցած պիտի ըլլանք արդարութեան և հաւասարութեան յաղթանակին մեծ և փառաւոր օրը:» (\*)

(\*) Սոյն կոնդակը թուրքերէնի թարգմանուելով կարդացուեցաւ մեր թեմի բոլոր եկեղե

Եւ երբ մեր այս կոնգակը թեմին բոլոր եկեղեցիներուն մէջ կը կարգացուէր, նոյն պահուն ժողովուրդեան մոլեռանդութիւնը գրգռող և ջարդին իրականութիւնը փութացնող «Արաբ Մօլլա» անունին տակ ծպտուած հօճա մը վիլայէթին շըրջանը կընէր և Սիսի, Կարսի ու զանազան տեղերու մզկիթներուն մէջ իր աւբոխավար քարոզները սաբառերով կը վերջացնէր. «Կեավուրլար երլան տըրլար, սօգարլար, օնլարըն պաշընը էգմէ տիքճէ պիզ միւսլիմանլար բահաթ օլամայըզ»: Այս լուրը պատօնապէս հաղորդուած ըլլալով Առաջնորդ արանիս, անմիջապէս Կ. Ստակալին կերթամ, կոբողսքեմ այդ խայտառակ խռովարարին դէմ, և կը պահանջեմ, որ անմիջապէս հեռագրով հրաման տրուի ձերբակալելու այդ կեղծ կրօնաւորը և երկրէն դուրս հանելու: Ճէվատ պէյ ազուէսի ծիծաղով մը կընդունի առաջարկութիւնս. կը խոստանայ հեռագրել և նահանգիս կեդրոնը բերել տալ խռովարար քարոզիչը: Երկու օր վերջը մարդասպան Կուսակալը մեզ կը հաղորդէ, թէ նոյն Քարոզիչը հրապարակաւ զղջում յայտած է Սսոյ մէջ, և թէ հիմակ աներևոյթ եղած է անիկա: Կը գարմանայի տրուած բացատրութիւններուն վրայ, որովհետև վստահ էի, թէ անբարեխիղճ Կառավարութիւնը

---

ցիներուն մէջ, և որուն հայերէն բնագիրը հրատարակուեցաւ «Ազգ»ի 32 թիւին մէջ:

Թոյլ տուած էր, որ ամբոխավար կրօնաւորը շըր-  
ջէր նահանգին մէջ, և այս անգամ գաղտնօրէն յու-  
զէր արդէն իսկ Սահմանադրութեան հռչակուած  
օրէն ի վեր հայերուն դէմ գրգռուող չարաշահ  
մոլեռանդութիւնը: Մեր այս համոզումն իր հաս-  
տատութիւնը գտաւ թեմական այցելութեանս մի-  
ջոցին կատարած քննութիւններէս: Որովհետեւ մին-  
չև ձէպէլը Պէրէքէթի յետին գիւղերը այցելած էր  
այդ ծպտեալ Մօլլան, և Շէրիաթը Ահմէտիյէյի  
մոլեռանդօրէն խեղաթիւրուած սկզբունքները  
քարոզած գիւղացի ժողովուրդներուն. ինչպէս  
պատմեցին մեզի այն ատեն իսառնըի (Պաղչէ-Գա-  
զա) ազգայինները:

Որովհետեւ հակառակ մեր յորդորներուն և մեր  
պաշտօնական դիմումներուն ջարդի սպառնալիքը  
Դամսկէան Սուրի պէս լեռան Հայ ժողովրդեան  
գլխուն վրայ կախուած ըլլալը մեզի կը հաղորդէ-  
ին զրկուած մասնաւոր պատգամաւորներ, նոյն-  
Ձ—Յին ստիպուեցայ թեմական այցելութիւն մը  
կատարել ձէպէլը Պէրէքէթի մեր Հայ ժողովուր-  
դին, կացութիւնը մօտէն քննելու և դարման մը  
խորհելու համար: Բոլոր գիւղերը վի առ մի քըն-  
նեցինք, եղած սպառնալիքներու բնոյթը վերլու-  
ծեցինք, և երբ մեր քննութիւններու հետեանքով  
համոզուեցանք, թէ տեղական աղաներու և շա-  
հախնդիր ու մոլեռանդ կրօնաւորներու առաջնոր-  
դութեամբ հակառակահամանադրական խուլ դաւա-

դրութիւն մը կը պատրաստուի, որուն առաջին զօները հայերը պիտի ըլլային, կը յորդորենք ժողովուրդը, որպէս զի Երկրին և Սահմանադրութեան հանդէպ իրենց քաղաքացիի պարտականութիւնը ի հարկին կարենալ կատարելու համար ամէն մարդ իր կարողութեան չափով քիչ շատ պիտուի: Այդ պատրաստութիւնը միևնոյն ժամանակ անձնապաշտպանութեան միջոց մը պիտի ըլլար իրենց, ո և իցէ դժբաղդ յարձակումի մը դէմ, մինչև որ սահմանադրասէր կառավարութիւնը՝ եթէ գոյութիւն ունենար, զիրենք պաշտպանելու գար: Այս ճամբորդութիւնս որ ամսոյ մը շափ տևեց ինծի առիթ տուաւ նաև տեսակցելու Ճէպէլը Պէրէքէթի Միւթէսարըֆ Ասաֆ Էսաա Էֆ.ի հետ, և մօտէն դիտելու անոր գործելակերպը: Դժբաղդաբար տեսայ, թէ ամբողջ Սանճագին մէջ հազիւ զայմագամ մը կար, որ իրապէս սահմանադրական ընթիմի յարմար վարմունք մը սենեցած էր մինչև այն առն, իսկ մնացեալները, Միւթէսարըֆէն սկսեալ մինչև յետին պաշտօնեայն փոխանակ տարբեր ազգաբնակչութեանց միջև փափաքուած համերաշխութիւնը ստեղծել ու պահել ջանալու, թուրք մուսուլմանութիւնը կը գրգռեն, Հայ ժողովուրդին դէմ: Ատանա վերադարձիս Ճէպէլի ժողովուրդին կացութիւնը, ինչպէս նաև Միւթէսարըֆին և Գոյմագամներուն հակասահմանադրական ընթացքը պարզեցինք Կուսակալին,

որ մեզ մտիկ ըրաւ իր կեղծաւոր բարեմտութեան  
դիմակին տակ ծածկուած շարամտութեամբը :  
Այս բերանացի դիմումով չի բաւականանալով ,  
պատրաստեցինք մեր գրաւոր եեղեկագիրը , (\*) և  
զայն ներկայացուցինք իր ուշադրութեան : Կու-  
սակալ ձէվատ պէյ իր պաշտօնի անցած օրէն իսկ ,  
չր գիտենք ի՞նչ ուժերէ թելադրուած շարունակ  
խուլ հակառակութիւն մը ցոյց տուած էր մեր ազ-  
գային—յարարերական գործերուն հանդէպ , ամէն  
անգամ որ առիթը ներկայացած էր իր այդ հա-  
կառակութիւնը , ինչպէս նաև իր շարամտութիւնն  
ու բացարձակ ապիկարութիւնը մեզի իրաւունք

---

(\*) Միևնոյն ձևով պիտի պատրաստէինք նաև  
մեր թեմի միւս Սանճաքներու տեղեկագրերն ալ ,  
եթէ տեսնէինք թէ կառավարութիւնը բարեացա-  
կամութիւնը պիտի ունենար լրջօրէն նկատողու-  
թեան առնուլ մեր առաջին տեղեկագիրը :

---

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ . — Տպարանական սխալի մը  
պատճառաւ այս չորս էջերը մոռցուած են Փոռ-  
մային հեա տպուելու , ուստի անջատաբար տպե-  
լով զայն կը միացնենք : 30 Կ (Կրկին) 31 Կ 32 Կ  
33 Կ էջերը՝ 30 , 31 ևն . էջերէն առաջ կարդաց-  
ուելու են : (Ծ . ՀՐԱՏ .)

տուէի՝ օգտակար արդիւնք մը չսպասելու իրմէն մեր տուած բափօրին վերաբերմամբ, ուստի 1909 Յունուար 10 թուականով Կուսակալութեան տըրուած բափօրին օրինակները հարկ տեսանք միւնոյն ժախանակ ուղարկել Մեծ Եպարգոսին, Երեսփ. Ժողովի Նախագահին, Արդարութեան և Ներքին Գործոց Նախարարներուն, ինչպէս նաև Պոլսոյ մեր Ազգ. Պատրիարքարանին, նոյնպէս բոլոր Պոլսական Հայ և Թուրք թերթերուն: Մեր այդ տեղեկագրով ձէպէլի սանճագին իւրաքանչիւր գազան առանձինն ուսումնասիրուած է, հոն ցոյց տրուած են հայերուն հանդէպ կատարուած զրկանքները, ըլլան պաշտօնական թէ անհատական խողովակներէ բղխած, ցոյց տրուած են իւրաքանչիւր գիւղի և գազայի մէջ բոլոր ա՛յն բռնապետները, որոնք նոյն իսկ սահմանադրական ընթիմի օրով ժողովուրդը իբրև ստրուկ գործածելու մտադրութիւնը ունին, ներկայացուած են՝ իրենց անուններով բոլոր այն մուլեռանդ հակասահմանադրականները, որոնք իրենց շահերուն համար հայերուն հանդէպ կատարած սարքելու մտադրութենէն չէին հրաժարած, և ի վերջոյ խնդրած էինք, որպէսզի մասնաւոր Յանձնաժողովի մը միջոցաւ անգամ մըն ալ քննուէին մեր ներկայացուցած խնդիրները, և հայրենիքին անդորրութեան ու ապահովութեանը համար մեր ներկայացուցած թելադրութիւնները ուշադրութեան առնուէին: Ոճրագործ Կուսակալը փոխանակ մեր տեղեկագիրը ուղղամտօրէն նկատողութեան առնելու, անգամ մըն ալ իր շարամտութիւնը երևան բերաւ և փոխանակ պահանջուած Յանձնաժողովին յանձնելու՝ մեր ներկայացուցած խնդիրներուն քննութիւնը, ժողովրդեան դահիճները դատաւոր կարգեց, այսինքն մեր կող-



մէ ամբաստանուածներուն յանձնեց մեր տեղեկագիրը, ոչ թէ իրողութիւնները ուղղամտօրէն պարզելու, այլ սճրագործներուն իրենց սճիրը քանի մը բառով հերքել տալու նպատակաւ: Այս պարագան առիթ եղաւ որ Կուսակալէն երեսն առած զեղծ պաշտօնէութիւնը աւելի խեթիւ նայի զինքը Առաջնորդարանիս բողոքող Հայ Ժողովուրդին, և անգամ մը ևս ամրապնդուի իր հայաջինջ նպատակներուն մէջ: Բայց Կուսակալը ասով չի բաւականացաւ. ան կարգ մը նպատակաւոր սուտերու վրայ հիմնուած իմ մասիս գաղտնի և դիտումնաւոր ամբաստանութիւններ գրեց Ներքին Գործոց Նախարարութեան, որոնց արձագանգը Արդ. և Կրօնական Նախարարէն հասած ըլլալով Կիլիկիոյ վեհ. Կաթողիկոսին, միևնոյն ճամբով պէտք եղած բացատրական պատասխանը տուինք մեր կողմէն: Կուսակալը և Ճէպէլի ՄիւթէսարըՓը այսչափով չի գոհացան: Ճէպէլի գիւղերուն մէջ գոյութիւն ունեցող և մեր տեղեկագրով մատնանշուած յոռութիւններն փոխանակ դարմանելու, հետզհետէ բազմապատկեցին իրենց ապօրինութիւնները, կարծես խաղալու համար Հայ խաղաղասէր ժողովուրդին համբերութեան հետ: Բայց մեր ժողովուրդը իր կրած այդ բոլոր գրկանքներուն հանդէպ, պաշտօնական և օրինաւոր բողոքի դիմումներով միայն բաւականացաւ, սա վստահութեամբ, թէ ուշ կամ կանուխ պիտի լսուէին իր պարկեշտ քաղաքացի օրինաւոր բողոքները: Ճէպէլի ՄիւթէսարըՓը ասով ալ չբաւականանալով «Հուգուգը Ումուժի յէ» ի մէջ ամբողջութեամբ հրատարակուած մեր տեղեկագրին ի պատասխան, Ատանայի մէջ Ապտիւլ Գատիրեան խմբակին հովանաւորութեամբ հրատարակուած «Րէհպէրի Իթիտալ» թերթի Յրդ թիւին

Generated on 2017-07-07 09:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015088846893  
Public Domain / http://www.hathitrust.org/access\_use#pd

մէջ հրատարակեց յօդուած մը, գրական պոռնկութիւններով, լիրբ սուտերով, անամօթ ուրացումներով և անպատկառ գրպարտութիւններով, որոնք հեղինակին ոճրագործ և լիտի ինքնութեանը ապացոյց մը միայն կրնային ըլլալ: Պէտք էր պատասխանել այդ յօդուածին, միևնոյն թերթին մէջ, բայց մեր պատասխանին նոյն թերթին մէջ հրատարակուիլը արգելուեցաւ Կուսակալին ազդեցութեանը տակ:

Երբ այս խնդիրները կը յուզուին ձէպէլի Սանճաքի մէջ բնակող Հայ ժողովուրդին կացութեանը շուրջ, ասդին Ատանայի մէջ կացութիւնը ոչ նուազ աննախանձելի վիճակ կ'առնուր, և տեղի կ'ունենային ա՛յնպիսի դէպքեր, որոնց նմանները տեսնուած չէին բնաւ՝ Ատանայի մէջն ու դուրսը՝ բռնապետական շրջանի օրով: Նոյեմբերի վերջին օրը Տարսոնցի թուրք սրիկայ մը ազգային վարժարանին ուսուցչուհիներէն միայն վրայ յարձակում կը գործէր փողոցին մէջ, բազմութեան ներկայութեան: Սեպտ. 28ին Համիտիէի մօտ Առաքել Պէրպէրեան անուն պատանի մը կը սպաննուէր 5 գնդակի և 7 դանակի հարուածներով և ապա կը յօշոտուէր: Դեկտ. 29ին կարգ մը թուրքեր յարձակում կը գործէին յուղարկաւորութենէ դարձող երգեցիկ մանուկներու վրայ, և անոնց ձեռք գտնուած մումի փայտերը կը կտարէին: Միևնոյն ամսուն Չօիուր Տիգրան անուն մէկը Փօլիս տարիէսին մէջ Ոստիկան Զօրաց Հրամանատար Ահմէտ պէյին կողմէն ապօրէն կերպով և խրժրժօրէն կը ձեռնուէր: Եւ երբ այս վերջին պարագային առթիւ թէ մեր պարտքը կատարած և թէ ժողովրդական դիմումին գոհացում տուած ըլլալու համար, Կուսակալին կը ներկայանայինք,

յանցաւորին պաշտօնանկութիւնը և պատժապարտութիւնը խնդրելու, Երլտրզի գործակատար և հայակեր ճէվատ պէյ ահամայօրէն մերկացաւ իրմէն իր կեղծաւոր աղուէսի մորթը, մէջօեղ դըրաւ իր հակասահմանադրական և հակահայ ոգին և Սահմանադրութեան ու ժողովրդին պարգևուած օրինական ազատութեան ականարկելով «նէ՛՛ օլտուգ տէյի զանն էտիյօրսունուզ» բառերով փակեց մեր բողոքին օրինաւորութիւնը: Այ կասկածելու աեղի չկար բնաւ. կառավարական պաշտօնէութեանց մտադրութիւնները մերկապարանոց կ'երևէին: Պոլսոյ մէջ կուսակցական թրքական վէճերը սուր հանգամանք մը առնել սկսած էին. դէպի Ատանա և դէպի Կիլիկիոյ ամէն կողմերը սկսած էին պատերազմական մեծաքանակ զէնքեր և ռազմանիւթ փոխադրել: (Տեղւոյն իթթիհատի առդամներուն վկայութեան համաձայն հակասահմանադրական շարժումի մը պատահականութեան առջև իբր թէ պատրաստ գտնուելու նպատակաւ եղած ըլլար այդ առաքումներու շարժառիթը): Միևնոյն օրերուն Մարաշի Սահմանադրասէր Կառավարիչը յարձակում մը կը կրէր թուրք խուժանին կողմէ՝ իր սահմանադրասէր արարքներուն ի պատիժ սպաննուելու սպառնալիքով և երբ Հալէպ երթալու համար Այնթապ կը փախչէր, հոն կը մեռնէր իր վախէն և սարսափէն: Բալուէն միևնոյն ժամանակ, միևնոյն օրերուն, գրուած ու Պոլսական թերթերու մէջ հրատարակուած թղթակցութիւն մը կը գուժէր Խարբերդի ու շրջակայից մէջ «Իթթիհատը Մուհամմէտիէ»ի մը կազմակերպութիւնը, որ ապահովաբար Սահմանադրութեան ճակտին նետուելիք նախատինքը պիտի ըլլար քիչ յետոյ: Այս ու այսօրինակ իրողութիւնները ինծի

տակաւ սա համոզումը կազմել կուտային, թէ Օսմ. հայրենիքը, մասնաւորապէս Կիլիկիան ահաւոր և արիւնոտ փորձութեան մը առջև կը գտնուէր։ Այդ համոզումիս իբրև արդիւնք «Բիւզանդիոն»-ի 3719 թիւին մէջ «Թղթակից» ստորագրութեամբ հրատարակուած թղթակցութեան մը մէջ սա բառերը կը նետէի, «Բռնապետութեան օրով մեր Վիլայէթը աւելի խաղաղ վիճակ մը ունէր քան թէ հիմա : Եւ կարգ մը իրողութիւններ տակաւ մեզի սա համոզումը կազմել կուտան, թէ Սահմանադրութեան կատակերգութիւնը հետզհետէ սղբերգութեան արիւնոտ տեսարաններ ցուցադրելու պատրաստուած է»։ Այսքան ակն յանդիման իրողութիւնները տեսնելէ յետոյ բնականաբար քաղաքի Հայութիւնն ալ ինքնապաշտպանութեան գործով քիչ ու շատ հետաքրքրուելու պիտի մղուէր, աշխատելով միեւնոյն ժամանակ ու իցէ պատրուակ չտալ թուրքերուն ձեռք, այդ արիւնոտ տեսարանները ցուցադրել կարենալու համար։

Այդ օրերուն կատարուած դէպք մը գաւառի թուրք ժողովրդեան մտքին վրայ ահագին դեր մը կատարելու կը կոչուէր։ Հիւսէյին Հիլմի փաշա իր եպարքոսութեան առաջին օրերուն նահանգներու բոլոր Կուսակալներուն հեռագիր մը կը քաշէր սա իմաստով, թէ «Կառավարութիւնը Մ. և Յ. Գօմիթէէն զատ ո՛չ մէկ կազմակերպութիւն պէտք չէ պաշտօնական և օրինաւոր ճանչնայ»։ Մինչև այդ հեռագրին թուականը Հայ Յեղափոխական Հնչակեան և Դաշնակցական կազմակերպութիւնները եթէ ոչ պաշտօնական գէթ օրինական և հայրենասէր կազմակերպութիւններ նկատուած էին ինչպէս մեր նրմանապէս թուրք ժողովրդին կողմէն։ Հիլմի փաշային հեռագիրը, սակայն, արդէն իսկ մոլեռանդ ու

նենգաժէտ թուրք մտածողութեան առջև կասկածելի ձևացուց Հայկական Կուսակցութիւնները : Եւ անոնք այդ օրէն սկսան լաւ աչքով շնորհակալ կազմակերպութիւնները : Հիլմի փաշա իր այդ հեռագրով , գոնէ թուրք խուժանին մտածողութեան համար , Հայերու «Քօմիթէ»ն Համիտեան շրջանին ըմբռնումին կ'առաջնորդէր , թերևս անգիտակցաբար , թուրքերը անկէ կը պաղէին հետզհետէ :

Ատանայի Հայ ժողովուրդը , նոյն իսկ Կուսակցութիւնները , հետզհետէ կռահելով իրենց շուրջ նիւթուած մեքենայութիւնները , կը քաշուին նոյն իսկ ցոյցերէ , որոնց մէջ արդէն շատ ժլատ գտնուած էին , ազատութեան հռչակումի առաջին օրերէն սկսեալ , (\*) բաղդատմամբ ուրիշ վիւայթներու ժողովուրդներուն : Կուսակալը սակայն փոխանակինքզինքը նուիրելու Հայրենիքի օգտին և բարգաւաճմանը , կը սկսի հետզհետէ աւելի անպատկառօրէն թեքիլ Ապտիւլ-Քաթիբի և իր համախոհներու նման բռնապետներու կողմը : Կուսակալ ձեւատ պէյի այս յատկանշական ժեսթը չը վրիպիր նոյն իսկ տեղւոյն «Իթթիհատ»ի կարծեցեալ ազա-

---

(\*) Սահմանադրութեան հռչակումի օրերուն կատարուած ուրախութիւններուն միջոցին Կիլիկիոյ Վեհ . Կաթողիկոսը Ատանա կը գտնուէր : Մէրսինի Հիւպատոսներէն մին Ն . Ս . Օծութեան այցելութիւն կուտայ , և խօսակցութեան միջոցին կը խնդրէ Վեհ . Կաթողիկոսէն , որպէսզի յորդորէ ժողովուրդը աչքի զարնող ցոյցերու չի մասնակցիլ , որովհետև , կ'ըսէ , ես շատ լաւ չեմ տեսներ այս փոփոխութիւնը , և կը վախնամ թէ օր մը արիւնոտ տեսարաններու հանդիսատես ըլլանք : Այդ յանձնարարութիւնը կը հասնի ժողովրդին ականջը և տակաւ կը քաշուի ցոյցերէ :

տական անդամներու ուշադրութենէն, այնպէս որ իր չարամտութեամբ ծանօթ իհասան Յիքրի Կուսակալին հասցէին «Իթիաալ»ի մէջ գրած յօդուածով մը կը ձաղկէ Կուսակալին ապիկարութիւնը և զանի ուղղութեան կը հրաւիրէ: Ճէվաա պէյ, որ կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով ինքզինքը այդքան ծանր քննադատութեան մը ենթարկուած կը տեսնէր, փոխանակ ինքզինքը ուղղելով նուիրուելու հայրենիքի օգտին, աւելի ևս կ'ամրապընդէ իր բարեկամութեան ներքին կապերը Թուրք «միւսթէպիա»ներու վոհմակին հետ: Այս շրջանին մէջ է, որ մէկ քանի կարևոր դէպքեր տեղի կ'ունենան քաղաքին մէջ, և որոնց ամէնքն ալ սարքուած ըլլալով Ապաիւլ-Գատիրի և համախոհներու կողմէն, նպատակ ունէին վրդովել Երկրին անդորրութիւնը, կասկածելի ներկայացնելով հայերը, գրգռելով իսլամներու մոլեռանդութիւնը հայերու դէմ, և պատրուակներ ստեղծելով կանխորոշուած ջարդին: Գիշեր մը քանի մը Թուրքեր թիթեղեայ ամանի մը մէջ կղկղանք դրած, կը տանին զայն քսելու Ուլու Ճամիի դրան վրայ: Այդ աղտոտ դէպքը հայերուն վերագրելով, Թուրք խուժանին մոլեռանդութիւնը գրգռելու անոնց դէմ: Բուն իսկ տեղւոյն վրայ կը բռնուին հեղինակները, բայց անոնց իսլամ ըլլալը հանսատուելէ յետոյ, լռելեայն կ'արձակուին, առանց պատժոյ ենթարկուելու: Նոյն դէպքը կը կրկնուի ու երբ դիտուողութիւններ կ'ըլլան Կուսակալութեան, Կուսակալը և «Իթիաալ», հաւասարապէս կը հերքեն կատարուած և ուրացումը անկարելի դարձած այս աղտոտ իրողութիւնը: Փետրվարի սկիզբը Հաճընէն հանրածանօթ Միւֆթիի տղայ Բէօր Ահմէտ հեռագրով կը հաղորդէ Կուսակալութեան, թէ

Հաճնոյ Հայերը գիրենք պիտի ջարդեն: Փետրվար Ցին իբր քննիչ Հաճըն կը ղրկուի Գօզանի նորեկ ՄիւթէսարըՓը, ու հակառակ եղած տեղեկութեան դիտումնաւոր ու չարամիտ ստույթեանը, այս անգամ ալ անպատիժ կը թողուի այս ոճրագործը: Այս միջոցին կը գուգադիպէր Թլան ագարակի մասին տրոս ած վերջին որոշումը, որուն հետեանքը եղաւ Վեհ. Կաթողիկոսին հրատարումը: Սոյն պեռակա՛ն բռնաբարումի դէմ բողոքելու համար Սիսի մէջ միթինկ մը կը գումարուէր և միւսնոյն ժամանակ Կաթողիկոսական Փոխանորդի և Սիսի Հայ ժողովրդի ներկայացուցիչներուն կողմէ ստորագրուած հեռագրով մը կը յանձնարարուէր նմանօրինակ միթինկներ գումարել Կիլիկիոյ շրջանակներու մէջ: Փետրվար 7ին պաշտօնագրով մը կը հաղորդեմ Ղևոնդ վարդապետի, թէ ես անձնապէս հակառակ եմ միթինկի գաղափարին, և կը յանձնարարեմ որպէսզի օրինական միջոցներով հետապնդուի գործը: Բայց միւս օր (8 Փետր.) Թաղ. Խորհրդոյ երկու անդամներուն ստիպումով և նախաձեռնութեամբ կը գումարուի միթինկը Մայր եկեղեցւոյ մէջ: Սոյն միթինկներու գումարումը բաւական խնդրոյ նիւթեր հայթայթեց Պոլսոյ Թուրք թերթերուն, և նոյն իսկ Վեհ. Կաթողիկոսը ամբաստանուեցաւ, իբրև ժողովուրդը գրգռող մը: Նոյն ամսոյ վերջերը, երբ ես Տարսոն կը գտնուէի, Ապտիւլ-Գաաէրի արբանեակ իտիպցիներու կողմէն տարածայնութիւն մը կը ստեղծուի, թէ գիշերանց Հայերը պիտի կոխեն զինուորական ռազմամթերքի «տէքօ»ն, զէնքերը գրաւելու նպատակաւ: Կուսակալ Ճէվատ պէյ և 1895ի Մարաշի ջարդին կազմակերպիչ Ատանայի Հրամանատար Ֆէրիդ Մուսթաֆա Բէմզի

փաշա անմիջապէս զինուորական խիստ հսկողութեան ներքեւ կ'առնուն ո'չ միայն տէփօն, այլ և հայոց թաղերը, և երբ Առաջնորդարանի կողմէն կը բողոքուի այդ ճրի զրպարտութեանց և անոր կարևորութիւնը ընծայուելուն դէմ, Կուսակալ և Ֆէրիք անամօթաբար կ'ուրանան ո'չ միայն այդ տեսակ զրպարտութեան մը մասին իւրենց եղած տեղեկատուութիւնը, այլ և իրենց կողմէն կարգադրուած զինուորական հսկողութեան պարագան: Ճէվատ պէյ և «Վիլայէթ Մէճլիսի Ումու-մի» թուրք անգամներ, ծայրայեղօրէն կը գինուին Հայ անգամներուն և անոնց ներկայացուցած բանաւոր և երկրասէր առաջարկներուն դէմ, լը-ռելեայն անոնց վերագրելու չարամիտ անջատողական, և զուտ հայկական դիտումներ և ի նպաստ քրիստոնեաներու մասնաւորապէս հայերու տըր-ուելիք որոշումները կը խափանեն, ամէն միջոցներով: Այս միջոցին Կառավարութեան և թուրք մեծամեծներու գրգռութիւնը խուլ կերպով կը մեծնայ, երբ կը տեսնեն Ատանայի Կուսակալութեան հայերուն միանուագ պաշտօնական դիմումը, որով կը մերժեն զինուորական տուրք վճարել 1325 ելե-մըտական տարուայ համար, և իրենց զինուորագրութեան յանձնառութիւնը կը յայտնեն:

Հսկաւակ այս իրողութիւններուն, և հակառակ նոյն իսկ մեր կասկածներուն, տակաւին համոզումը ունէինք, թէ հոս ու հոն տեսնուած մասնակի դէպքերը, և մերթ ընդ մերթ լսուող սպառնալիքները չէին կրնար ահաւոր կոտորածի մը յանգիլ Սահմանադրական ռէժիմի մը օրով: Սոյն դէպքերէն մինչև Մարտ 2 տիրող հանդարտութիւնը հազիւ խանգարուեցաւ Սսեցի երեք ջորեպաններու վիրաւորումովը Ապտալներու ձեռքով:



Սոյն և ապագայ անդորրութիւններէն կրթապէս  
օգտուելու նպատակաւ Փետր. 16ին Ատանայի Գա-  
ւառ. Ժողովոյ կողմէն տրուած որոշման համաձայն  
Մարտ 4ին Ատանայէն կը մեկնիմ դէպի Եգիպտոս,  
Ատանայի մէջ բացուելիք Գիւղատնտեսական վար-  
ժարանին հասոյթին մէկ մասը ապահովելու համար  
Եգիպտոսի Ղ. Բ. Ը. Միութեան և Հայ հարուստնե-  
րու քով գիմումներ ընելու իմ այդ միամսեայ բա-  
ցակայութեանս միջոցին է, որ Ատանայի դէպքերը  
գահավէժ ընթացք մը կ'առնուն :

Առաջ բերենք հոս պարագայ մը, թուրք ազբիւ-  
րէ մը քաղուած, որ կուսակալին վատաբարոյութիւ-  
նը և իրեն հակասահմանադրականներու ուխտեալ  
բարեկամ մը լլալուն ապացոյցը կուտայ : «Իթիտալ»ի  
խմբագիր Իհսան Տիքրի, տարիներ առաջ աքսոր-  
ուած և բանտարկուած Փայասի բերդը, Պահրի վա-  
չայի շնորհիւ բերդարգելութենէ կ'ազատուի, և Ա-  
տանայի մէջ բացուած պետական Արհեստանոց-Վար-  
ժարանի տեսուչ կը նշանակուի : Երեք տարի առաջ  
իր դէմ եղած իրաւացի գանգաւանները նկատողու-  
թեան առնելու համար Նահանգ. Իտարէի ժողովոյն  
կողմէն Քեննիչ Յանձնախումբ մը կը կազմուի, իմ  
ալ անդամակցութեամբս : Իմ և ընկերներուս կող-  
մէ եղած կարգ մը իրաւացի դիտողութիւններուն  
իբր արդիւնք, Իհսան Տիքրի և իր ընկերը Մուխ-  
թար Տիքրի կը ստիպուին հրաժարիլ իրենց պաշ-  
տօններէն, և այդ օրէն սկսեալ լռին հակառակու-  
թիւն մը կը սկսի այդ երկուքին կողմէն ո՛չ միայն  
իմ անձիս, այլ և Արհեստանոցի տեսուչութեան կոչ-  
ուող Կէրկէրլի Ալի Էֆ. ի դէմ, որ Ապտիւլ-Գատի-  
րի աքսորակիցը եղած էր ժամանակին : Սահմանա-  
դրութեան հռչակումին առաջին օրն իսկ, Իհսան  
Տիքրի պայքար կը մղէ նաև այս վերջնոյն դէմ, ա-

ռանց կարենալ զայն պաշտօնանկ ընել յաջողելու , պայքարը կը տևէ սակայն : Կէրկէրլի դատի կ'ենթարկուի , դպրոցի երկու ուսուցիչներու ամբաստանութեան վրայ . բայց Իհսան Ֆիքրի և իր համախոհները նկատելով թէ իրենց հակառակորդը կուսակալութեան պաշտպանութեան տակ կը գտնուի , կ'որոշեն համազգային Միթինկով մը բողոքել Կէրկէրլի և իրեն շռայլուած պաշտպանութեան դէմ : Կէրկէրլի ալ իր կողմէն պարապ չմնար , իր համախոհներով ինքն ալ կը կազմակերպէ հակառակ ուղղութեամբ Միթինկ մը , սպառնալով միևնոյն ժամանակ , թէ եթէ իրեն հակառակ գումարուելիք Միթինկը տեղի ունենայ , պարզապէս արիւնհեղութիւն պիտի կատարուի : Մարտ 12ին կատարուելիք այդ Միթինկները արգիլելու համար , ճէվան պէյամէն միջոցի գործ կը դնէ . միևս կողմէն Առաջնորդարանը Հայ ժողովրդեան կը յանձնարարէ , որ պէսզի այդ երկու Միթինկներէն և ո՛չ միոյն մասնակցի , Միթինկը կը ձախողի , ու Իհսան Ֆիքրի Իթիտալի 17 Մարտ թիւին մէջ բուռն յօդուած մը հրատարակելով և կուսակալը պախարակելով իբրև «Իսթիպտատ»ի կուսակիցներուն գաղափարակից , կ'աւելցնէ , «Սարայ թէրպիյէ սիյլէ միւթէիտալիք օլան Վալիմիզ , իտարէ իուսուսընտա թամմ Նըլտըզըն մէսլէքի սապըգաի մայիւմինի թա'ազիպ իտիյօր , պիւթիւն զըմամը իտարէ սինի կէլտիյի կիւնտէն պէրու պիր գաչ միւթէնէֆֆիզին տէսթի մէնֆա'աթ փէրէսթինէ թէրք իթտի , օնլարըն էլլէրիյլէ թէտվիրը ումուր էտիյօր , Վիլայէթին ահվալը ումուսմիսի էսկի տէվրտէն չօգ ֆէնա տըր . օ' զէման հիչ օլմագսա պիր իսթիպտատ գօրգուսու վարիտի . հէր քէս օնսան գօրգար , իչինէ կիւճիւնէ պագարտը . շիմտի իսէ . . . » (Կախման կէ-

տերը յօդուածագիրինն են)։ Սոյն առոգերը ստորագրող անկարագիր և բարոյական արժանիքէ ու արժանապատուութենէ զուրկ այս սրիկան իր վերոյիշեալ յօդուածին մէջ՝ «Հիշլիք թիմուալի» և «Պիր Գօճա գարըյը անտըրան» անունով յորջորջած բայց իրազէս արիւնկզակ Կուսակալի մը հետ գործակցելով պիտի մասնակցէր ա՛յն եղեռնագործ շարժումին, որ Ատանայի Հայու թեան բնաջրջումն յառաջ բերաւ։ Իհասան Ֆիքրիի վերոյիշեալ յօդուածը ծայրայեղօրէն գրգռած և շարժման մէջ դրած է «Միեսթէպիտներ»ը, որոնք իրենց և Կուսակալին պատիւն և ազդեցութիւնը փրկելու համար, կ'աշխատին համակրական հոսանք մը ստեղծել Կուսակալին շուրջ։ Սուպհի փաշայի, Հօճա Միւճթապա էֆէնտիի և Եսուուֆ թամպէի միջոցաւ լուր կը դրկուի ի միջի ալլոց մէր Առաջնորդարանին ալ, մասնակցելու այդ ցոյցին, և ստորագրելու Կուսակալէն գոհունակութիւն յայտնող հեռագիրը։ Քաղաքական Ժողովն մեր Փոխանորդին նախագահութեամբ գումարուած Հայերեւելիներու հետ խորհրդակցելով կը մեյժէ համակրական ցոյց մ'ընել, և գոհունակութեան հետագիրն ստորագրել Կուսակալի մը համար, չոր իր եկած օրէն սկսեալ հակահայ վարմունք մ'ունեցած է, որ վիլայէթի Ընդհ. Ժողովոյ գումարման պահուն, ամէն էնթրիք, ամէն խարդաւանանք ի գործ դրած է, Քրիստոնեայ անդամներուն արդար պահանջներն խեղդելու, որ Քրիստոնեաներուն և մասնաւորապէս Հայերուն նպաստաւորեղող ստորագրուած սրտումներն անգամ յետոյ գրչի առնել չտալու ստորնութիւնը ցոյց տուած է, և որ Համիտիէի մէջ գտնուած և բռնապետական ու իսլամական զգացումներով տոգորուած Միւճթիի և համախոհներուն սադրանքով դեռ քանի մ'օր առաջ արգիլած էր տեղւոյն Հայերուն

Generated on 2017-07-07 09:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015088846893  
Public Domain / http://www.hathitrust.org/access\_use#pd

և Հայ Բողոքականներուն կոչնակահարութիւնը» : Բացի Հայերէն , Հայ-Բողոքականներէն և Յոյն Հասարակութենէն , ուրիշ յարանուանութեանց հոգեւոր պետերը և երևելիները մասնակցած են կատարուած գոհունակութեան ցոյցին : Այս պարագան կուսակալին և իրեն համախոհ հակաբանական հակաբանական վրէժխնդրութիւնը գրգռող պատճառներէն մէկը պիտի ըլլար բնականաբար :

Վրէժխնդրութեան գրգռիչ պատճառներէն մէկն ալ սա էր որ կէրկէրլիի դատավարութեան միջոցին Հայ վկան , Յ . Ասլանեան , իրաւամբ աննպաստ վրկայութիւն տուած էր , և իտարէի միակ անդամը , Յարութիւն Սմմիկեան մեր լսածին նայելով կէրկէրլիի դատապարտութիւնը պահանջած էր . երբ իր միւս ընկերները , կուսակալէն սկսեալ՝ անպարտութեան վճիռ կ'արձակեն , որքերուն դրամն իւրացնող աւագակի մը համար :

«Իթիտալ» ի խմբագիրը իր վերոյիշեալ յօդուածէն վերջ անորակելի չարամտութեամբ մը իր խուժանակուն ամբոխավարի շեշտուած նկարագրին մէկ ապացոյցն ալ կուտայ ագարակատէրերու և գիւղացիներու հասցէին , իր թերթին մէջ գրելով թէ կառավարութիւն գոյութիւն չունի Ատանայի մէջ , թէ իրենք պէտք չէ ունենան սպասեն կառավարութենէն և թէ իրենք պէտք է ստանան իրենց ինչքերուն , կենդանիներուն պահպանութեան հոգար , գործաւորական խճողումի սա շրջանին մէջ : Այդ յօդուածը ահագին ազդեցութիւն կը գործէ թուրք խուժանին մտքին վրայ , և ան լիապէս համոզում կը կազմէ , թէ—իրը թէ այդ համոզումը կազմելու համար այսօրինակ հրատարակութեան մը պէտք ունենար—Երկիրը անիշխանութեան մատնուած է , թէ Ապաիւլ-Փատիրի նման ամբոխավար-

ներու ձեռքն է երկրին վարչական սանձը, և թէ ինք, խուժանը, պիտի կրնար իր ուզածը ընել առանց իր վրայ հրաւիրելու ու է պատասխանատուութիւն, առանց իր դէմ գտնելու ու է գսպիչ ոյժ մը:

Այս օրեր Ատանա վերադարձած է Նահանգին երբեմնի Գօմիսէր Զօր Ալի, ժողովուրդին ուշադրութիւնը գրաւելու չափ աւելի նպաստաւորուած նիւթական պայմաններով: Տարածայնութիւն մը կայ, թէ Զօր Ալի բերած ըլլայ կարգ մը անծանօթ անձնաւորութիւններ, որոնք Պոլսէն դրկուած ըլլան, ջարդի շարժումը պատրաստելու ճիշտ այն օրը, երբ տեղի պիտի ունենար Պոլսոյ զինուորական չավուչապետական-յետադիմական շարժումը: (\*)

Զօր Ալիի Ատանա վերադառնալուն կը զուգադիպի նաև Ատանա գալուստը Ահրարներու խմբին պատկանող և «Օսմանլը»ին թղթակից Մահմուտ Ֆայիզ պէյի: Այս վերջինին Ատանա գալուստը մէկն է այն մութ մնացած կէտերէն, որոնք կրնան ջարդի հետ յարաբերութիւն ունեցած ըլլալ, և որոնք սակայն լուսաբանութեան կը կարօտին: (\*\*)

---

(\*) Զօր Ալի Պօլիս մեկնած պահուն շայերէն բարի վարուց վկայական մը խնդրած էր, բայց իր հայատեսաց և կսչառակերական կեղեքումներուն համար այդ վկայականը մերժուած էր: Զօր Ալի Պօլիս մեկնելէ վերջ, յարած է «Ֆէտաքեալան ր Միլլէթ»ի կուսակցութեան:

(\*\*) Պաշտօնական քննութիւններով ստուգուած է, թէ ջարդերէն տասն օր առաջ խռովարարներ դրկուած են նաև Անտիօքի կողմը: Անտիօքէն առնուած նամակի մը մէջ կը կարդանք. «Դէպքէն 10

Մարտ 15էն սկսեալ արդէն Երկրին Թուրք ժողովրդեան դէպ ի Հայերը ունեցած առերևոյթ բարեացակամութիւնը վերցած է բոլորովին : Կուսակալին Համրաիէ այցելութեամբ և արուած գաղտնի թելադրութիւններուն հետևանքով Թուրք ժողովուրդը սկսած է նախատական վերաբերումի մը վերսկսիլ Հայերուն դէմ : Այս մեծ փոփոխութիւնը ժողովուրդին աչքէն չի վրիպիր և անուղղակի կերպով կը հաղորդուի Առաջնորդարան :

Քաղաքին մէջ ալ միևնոյն փոփոխութիւնը :

1. — Քաղաքին մէջ իրենց սճրագործութիւններով և հայատեաց զգացումներով համբաւաւոր Սալճը կոչուած խմբակէն Հիւսնիի նման կարգ մը արիւննուշտ սրիկաներու ոստիկանի զգեստ կը հագցուի, և ոստիկանական փափուկ պաշտօնի գրլուխ կ'անցնին :

2. — Հայ աղայ մը գիշերանց քանի մը թուրքերու կողմէն բռնի Թուրք խանութ մը կը քաշուի, և հոն անոնց կողմէ չարաչարօրէն կը լլկուի :

3. — Բալուցի Եսփուճի Կարապետի աղան քա-

---

օր առաջ հոս հասած, և դէպքէն Յօր վերջ փախած ըլլալով, Հայէպ ձերբակալուած և բանտարկուած են կ'ըսուի : Ասոնց մէջ կը գտնուին եղեր ուէաքսիօնէաներէն Ֆէտաքեարան կուսակցութեան պետ և Քէրքիւթի կառավարիչ Սէլիմ Ափուլլահ պէյ, որը միանալով տեղւոյս Իսլամ մեծամեծներուն, իրենց մէջ դրամական բաշխումներ կատարելով համաձայնած, և այս աղէաքը յառաջ բերած են, ինչպէս կը հասկցուի հիմա : Սոյն Ափուլլահ այցելած է նաև Ատանա, և բոլոր այն տեղերը ուր ջարդ պատահեցաւ :

Generated on 2017-07-07 09:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39015088846893  
Public Domain / http://www.hathitrust.org/access\_use#pd

նի մը թուրքերու կողմէն կը հետապնդուի և կը գանակոծուի բրտօրէն, սպաննելու սպառնալիքով: Տղան իր ծեծուիլը և սպաննուելու սպառնալիքին տակ ըլլալու պարագան կը հաղորդէ կառավարութեան, ու այդ բողոքը բնաւ նկատողութեան չառուիր:

4. — Դպրոցական աղջիկներ նորէն կը հետապնդուին թուրք սրիկաներու կողմէն, ու աչակերտուհիներէն մին, իր պատուոյն նախանձախնդիր, իր վրայ յարձակում գործող վավաչոտ թուրքը գանակով կը վիրաւորէ:

5. — Իրենց արկածախնդրական կեանքով հանրածանօթ Պահրի և Ֆէթթահ անօրինակ խաբէութեամբ մը կը գրաւեն Չոք Մարզուանցի տղու մը գէնքը: Անիրաւուած տղան Կ. Չալեանի և Կ. Կէօվաէրէլեանի միջոցաւ դիմում կ'ընէ Փօլիս Իտարէսին: Ոստիկանատունէն յուսահատ, կը դիմեն Ֆէթթահի: Օր մը Իսպիր օղլու Օթէլին դրան առջև Պահրի, որ «Իհթիաթ» ի զինուորութեան կոչուած էր, երկու ապտակ կը զարնէ Չալեանին, ազդարարելով, որ այլևս չի հետապնդէ գէնքի խնդիրը, և կը սպառնայ ապտակել նաև Կէօվաէրէլեանը և Չ. Պզտիկեանը, այս երեքն ալ նկատելով Կուսակցութեանց պետեր: Կօչկակար Հայ արհեստաւորներ. Հնչակեան գործիչի մը այս ապտակումէն իրենց սրժանապատուութիւնը վիրաւորուած զգալով կ'ուզեն լաւ դաս մը տալ Պահրիին, բայց Չալեան գանոնք կը հանդարտեցնէ, ըսելով «Ասոնք խնդիր հանելով կ'ուզեն ծանր միջադէպ մը ստեղծել, պէտք չէ որ ասոնց պատրուակ տանք, հանգիստ կեցէք, ես խնդիրը օրի նական միջոցներով կը հետապնդեմ»: Կէօվաէրէլեան կը լսէ իրեն հասցէին նետուած սպառնալիքը

և թո՛ւշ Մաղազայի առջև կանգնած զինքը ծեծել սպառնացողներուն հրաւէր և ասպարէզ կը կարգայ :

6. — Մարտի 15էն սկսեալ թուրք սրիկաներ գաղտնի կազմակերպութեան մը հետեանքով, Հայ թաղերու մէջ կը ցրուին գիչերները, նոյն իսկ ցերեկ ատեն, և որոնք հանդիպած Հայը ծեծելով, խոշտանգելով անոնց վրայ գտնուած դրամը, զէնքը կը յափշտակեն :

7. — Այդ կազմակերպուած խումբերու պարագլուխներէն մին, Գարա Ալի, քաղաքին եզերքը դարանած այգիի Հայ մշակներուն վրայ յալձակումներ կ'ընէ, կողոպտելով զանոնք : Այդ յարձակումին և կողոպտումին ենթակայ կ'ըլլայ նաև Առաջնորդարանիս սպասաւորը Արսէն, այգի գացած պահուն :

8. — Այս միևնոյն խմբակը յարձակումներ կ'ընէ Տօքթ. Պուլթրոսի քաղաքին եզերքը գտնուած բամպակի գործարանին աշխատաւորներուն վրայ, որոնք այդ յարձակումներուն հետեանքով կ'ստիպուին օր մը գործադուլ ընել : Լիբանանցի գործարանատէրը կը բողոքէ, այդ բողոքին կը միանայ Առաջնորդարանին ալ բողոքը : Գարա Ալի կը ձերբակալուի և 24 ժամ վերջ ազատ կ'արձակուի :

9. — Աւագ Երեքչարթի այգիէն վերադառնալու պահուն կը կրկնուի Յրդ. հատուածին մէջ պատմուած դէպքը : Միևնոյն թուրքեր այս անգամ բոլորովին զինուած դանակներով և զէնքերով կը յարձակին Կարապետի տղուն վրայ, որ տեսնելով թէ այլևս վերահաս մահուան մ'առջև կը գտնուի, անձնապաշտպանութեան նուիրական պարսականութիւնը կը զգայ իր մէջ, և իր հինգհարուածեանը հանելով կը պարպէ իր հակառակօրդներուն



վրայ, իր արձակած գնդակներուն երկուքը ծանրապէս և մէկը թեթևօրէն կը վիրաւորուին: Ասոնցմէ մին Աւագ շաբթուան մէջ, իսկ միւսը Զատիկի Երկուշաբթի օրը կը մեռնին իրենց առած վէրքերէն: Քաղաքին մէջ յուզումը սկսած է ծայրայեղօրէն երևան գալ: Զատիկը Հայերուն համար սոսկումի և երկիւղի տօն մը կ'ըլլայ: Տղան անձնապաշտպանութեան համար կատարած իր ոճիրէն անմիջապէս յետոյ կը յաջողի փախչիլ մինչև Կիպրոս: Ոճրագործ Կուսակալը փոխանակ աշխատելու որ Հայերուն վրայ յարձակող և զանոնք կողոպտող թուրք սրիկաները պատժուին, ու ասկէց վերջն ալ փոխանակ աշխատելու, որ ոճրագործը չի յաջողէր փախչիլ արտասահման, Զատիկի Երկուշաբթի օրը ինքն ալ միացած փողոցային խուժանին, մեր Առաջնորդարանին գործակատարէն կը պահանջէ ոճրագործը յանձնել Կառավարութեան, իբր թէ Առաջնորդարանը արդէն իսկ արտասահման անցած տղու մը թագստոցը և կամ ստիկանութեան մէկ մասնաճիւղն եղած ըլլար: Եւ երբ Առաջնորդարանի գործակատարը կը յայտարարէ, թէ ոճրագործի մը ձերբակալութեան պաշտօնը Կառավարութեան գործն էր, և թէ Առաջնորդարանը անկարող է ունէ ազդեցութիւն ունենալ այսօր արտասահման գտնուող Հայ տղու մը վրայ, Կուսակալը շամօթահար իր ըսելու գործակատարին «Գաթիլտէ թէսլիժի տիլմէլի իտի» բառեր, որոնք այնքան յատկանշական են և որոնք իրենց ներքե կը պահեն կանխամտածուած ջարդի մը յայտնի սպառնալիքը:

Այն օրէն, որ երեք թուրքեր վիրաւորուած էին, այն օրէն սկսեալ արդէն իսկ սկսած է իրենց վրայ գէնք պարպող աղուն թաղին վրայ յարձակում գործելու թուրք խուժանին սպառնալիքը և

փորձը : Առաջնորդարանին դիմումներուն ի պատասխան կուսակալ, Ֆէրիք և Ոստիկանութիւն պահ մը առերևոյթ բարեացակամութիւնը կունենան , խնդրոյ նիւթ Շապանիյէ (Թօսպաղը Գալէսի) թաղին վրայ գործուելիք յարձակումը վրիպեցնելու , Խթումի և անոր յաջորդող մէկ երկու գիշերները : Խուլ հակառակութիւնը մութի մէջ գործող դաւաճաններու շնորհիւ խուժանին մտքին մէջ կուռի , կը մեծնայ : Կառավարութիւնը Թուրքերուն պատերազմական զէնքեր կուտայ պաշտօնապէս , ու գաղտնօրէն , Հայերուն կողմէ ըլլալիք յարձակումներուն ? դէմ ինքզինքնին պաշտպանելու որոշ յորդորով (պարագայ մը որու մասին ստոյգ տեղեկութիւն առնուած է առաջին ջարդէն անմիջապէս յետոյ) : Կուսակալը ջարդէն քանի մ'օր առաջ «Ի տարէ» ի անդամ և իրեն բարեկամ Երեսուցի Թամպէի (Արաբ Կաթուղի) գաղտնապէս կը զեկուցանէ որպէսզի այդ օրերուն դուրս չելլայ և հրապարակի վրայ շատ չերևնայ , (այս պարագան Ատանայէ պատուաւոր Յոյնի մը կողմէն գրուած նամակէ մը կը քաղենք) :

Սարսափահար Հայ ժողովուրդը իր շուրջ տեսնելով հանդերձ Թուրք խուժանին կատաղութեան թափը տակաւին չուզեր հաւատալ , թէ այդ գըրգըռուները կրնան ջարդի մը կամ ահաւոր յարձակումի մը յանգիլ : Թուրք խուժանը Չապիին երրորդ օրը արդէն իսկ ստքի վրայ է , ու իրիկուան դէմ մէնքնալ առանց բացառութեան փաթթոցաւորուած ու զինուած են ստքէն մինչև գլուխը : Այդ արդէն իսկ կազմ ու պատրաստ և ազդարար նշանին սպասող խուժանին մոլեռանդութիւնը անգամ մ'ևս գրգռելու համար Թուրք ամբոխավարները Սաաթխանէյի հրապարակին մօտե-

րը կը սպաննեն Լուսֆֆիկ անուեով Կեոարացի Հայ մը, որուն թլփատուած մ'ըլլ սլուն տեղեկութիւն ունէին անշուշտ կանխաւ, ու անմիջապէս կը տարածայնեն թէ «Կեովուրները նոր իսլամ մըն ալ սպաննած են և որոշած են զմեզ ամէնքնիս ջարդել»: Տարածայնութիւնը կայծակի արագութեամբ շրջան կ'ընէ ա'բսող թուրք թաղերուն մէջ, խուժանը կը հաւաքուի կառավարական պաշտօնատան հրապարակին վրայ. «Կեովուրները նոր իսլամ մըն ալ սպաննած են» շշնկոցը ամէնուն բեր'ին և վըրէժինդրութեան ծարար ամէնուն սրտին մէջ: Արդէն իսկ մեռած դիակին բժշկական քննութիւնը կատարելու համար բժիշկ մը կը փնտռուի, ու անշուշտ սխալմամբ՝ կը բերուի Թաղապ. բժիշկներէն Տօքթ. Քերովբէ Ճէզվէճեան: Դիագնոստիկական պահուն Տօքթօրը կը համարձակի յայտարարելու թէ իբրև թուրքի բերուած այս դիակը պարզապէս Հայու մը դիակն է, հակառակ անոր թլփատուած ըլլալուն, թէ ատիկա Ատաղճագործ Լուսֆֆիկն է, որուն ուսին վրայ դեռ քանի մ'օր առաջ ինք վիրաբուժական գործողութիւն մը կատարած և վէրքը կարած է, և մերկացնելով դիակին մարմինը, ցոյց կուտայ կարուած վէրքը և անոր թւին վրայ գտնուած խաչանշանը:

Հակառակ Դշ. առաւօտուն քաղաքին մէջ վըրէժացող մուսուլմանական հոսանքին Հայերը, միշտ լաւատես երկրին կացութեանը մասին, և վստահ ոճրագործ Կառավարութեան Երկրին անդորրութիւնն ու խաղողութիւնը պահպանելու բարեացակամ ? մտադրութիւններուն, ամէնքն ալ իրենց գործերուն զլուխը կանցնին: Հազարաւոր մշակ և այգետերեր այգիները, բազմաթիւ Երկրագործներ և գործաւորներ ագարակները կ'երթան, իրենց

դաշտային աշխատութիւնները վերսկսելու, որոնք Ջատկի առթիւ երեք օրէ ի վեր ընդհատուած էին: Վաճառականներ խանութնին կը բանան, և կը վերաբացուին քանի մ'օրէ ի վեր Ջատկի առթիւ փակուած Ազգ. և ուրիշ յորանուանութեանց վարժարանները, ուր 4,000է աւելի աշակերտներ կը յաճախեն: Այդ պահուն շփոթութիւնները կը սկըսին Շապանիյէ և քաղաքին ծայրը գտնուած ուրիշ թաղերու շուրջ, թուրք խուժանի կողմէն: Քէչէճիլէր շուկային մէջ, հոն ուր չորս ճամբաներ զիրար կը խաչատեն, թուրք խուժանը կը յարձակի անցօրդ Հայերուն վրայ, և կը վիրաւորէ, գանոնք կողոպտելով: Փօլիս և իրեն ընկերացող զօրքեր, փոխանակ թուրք յարձակողները բռնելու և կամ ցրուելու, վիրաւորուած Հայերը կը ձերբակալեն, ծեծելով բանա կ'առաջնորդեն: Զօրքերուն ձեռքէն հազիւ ճողոպրած քանի մը վիրաւոր Հայեր կը յաջողին մինչև Առաջնորդարան ապաստանիլ, իրենց վիճակը և Ելկրին սպառնալից կացու թիւնը պարզելու: Շուկացիները ահ ու սարսափի մատնուած կը սկսին իրենց խանութնին փակել: Ազգային վարժարանի ուսուցիչներէն Տիգրան Պետրոսեան, կացութեան հետզհետէ կնճռոտիլը տեսնելով աշակերտներուն յայտարարութիւն մը կ'ընէ սա բառերով «Մենք չենք կրնար պատասխանատու ըլլալ Ձեզ համար, ուզողները կրնան իրենց տունները վերադառնալ»: Այս ոչ-վճռական ազդարարութեան վրայ աշակերտները կը ցրուին, և ծընողքներէ ոմանք կուգան իրենց զաւակները կը տանին:

Անդին, Ազգային Առաջնորդարանի մէջ, առաւօտ կանուխ Քաղաք. Ժողովը կը գումարուի երեւելիներու մասնակցութեամբ, իրաց կացութեան

մասին խորհրդակցելու, և քաղաքին յուզուած վիճակը բարւոքելու համար Կառավարութեան մօտ պաղատագին դիմումներ ընելու, միշտ սա լաւատես համոզումով, թէ Սահմանադրական ոչ ժիմի օրով Կառավարութիւնը երբէք պիտի չը թողուր որ ջարդ կատարուի, ինչ որ ալ ըլլայ վայրագ խուժանին ընթացքը և թէ երբ Կառավարութիւնը համամիտ չըլլար, կարելի չէ ու է դէպք կամ ջարդ:

Հազիւ թէ պատգամաւորութիւն մը կազմը ւած էր ժողովոյ կողմէն Կուսակալին մօտ իր դիմումներն ընելու, Կուսակալին կողմէն ուստիկան մը կը ներկայանայ Առաջնորդարան, Կառավարչատուն հրաւիրելու համար Առաջն-Փոխանորդը և կառավարական ժողովներու Հայ անդամները: Տեղական Կառավարութիւնն, իր հոգածութի կեղծարար դերին մէջ պահովիչ յայտարարութիւններ կընէ, ամէն ազգի հրաւիրեալներուն, և կ'որոշուի Երկրին ապահովութեան համար միջոցներ ձեռք առնել. միջոցներ, որոնք արաւքին ձեւակերպութիւններ էին մրայն, հրամայել վաճառականներուն փակուած խանութները վերաբանալու: Կուսակալութեան կողմէն հրաման կը տրուի Հայ ներկայացուցիչներուն դառնալ Առաջնորդարան և համոզել Հայ վաճառականները, խանութնին բանալու: Մեր Փոխանորդը Տ. Արսէն Քհնյ. և Դաւիթ էֆ. Ուրֆալեան երբ Առաջնորդարան կը հասնին, և Քէչէճիլէրէն փախած Հայ վերաւորները կը տեսնեն, հոն գտնուողներուն հետ խորհրդակցութիւն մը կատարելէ վերջ, կ'որոշեն վերադառնալ Կուսակալին մօտ, խնդրելու համար անկէ՝ որպէս զի շփոթութեան կեդրոն և վառարան կազմող Քէչէճիլէրի Թուրք խուժանը ցրուուի գինուորական ուժով ու խիստ միջոցներով: Այդ դիմումին հա-

մար անդամ նշանակուած Դաւիթ Էֆ. Ուրֆալ-  
եան հագիւ շուկայ հասած Թաշ Մաղազայի առջև  
ահա յանկարծ կը սպաննուի Ապտիւլ-Գատիրի մէկ  
հրամանին վրայ: (Սպաննութեան քիչ մը առաջ  
Ապտիւլ-Գատիր, Սուպհի փաշա, Կէրկէրլի և Պա-  
թումը Օսման Էֆ. և ուրիշներ միասին գտնուած  
են նոյն տեղւոյն վրայ): Նոյն պահուն կառավա-  
րական պաշտօնատան մէջ կը սպաննուի՝ պաշտօնէ-  
ութեանց աչքին առջև և պաշտօնեայի մը կողմէն  
Շատարեան Արթին աղա, որ Քաղաք. Ժողովոյ և  
միւսնոյն ժամանակ Պէլէտիկի Ժողովին կ'անդա-  
մակցէր: Նոյն պահուն Մէրքէզ Գոմիսէրութեան  
պաշտօնին կը կոչուի Պոլսէն Ղրկուած ամբոխավար  
Զօր-Ալին, մինչ անդին ԶինՈՒՈՐԱԿԱՆ ԶՈԿԱՏ ՄԸ  
ՈՐՈՒՆ ԻԲՐ ԹԷ ՊԱՇՏՕՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՊՍՀՈ-  
ՎՈՒԹԵԱՆ ՀՍԿԵԼ ԷՐ, ԻՐԵՆ ՏՐՈՒԱԾ ԳԱՂՏՆԻ  
ՀՐԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԱՄԱԶԱՅՆ, ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՓՈ-  
ՂԻ ԱԶԴԱՆՇԱՆՈՎ և լսուածին համաձայն էրքեա-  
նը Հարպի Րէյիս Սէլիմ Պէյի հրամանատարու-  
թեամբ, կը պաշարէ Շապանիէ թաղը և կանոնա-  
ւոր գնդակահարութեամբ յարձակում կը գործէ,  
անպատասխար ու անպաշտպան ու համակ քրիստո-  
նէաբնակ թաղի մը վրայ, որուն միակ ու մեծա-  
գոյն յանցանքը երկու թուրք սրիկաներու սպան-  
նիչ Հայու մը բնակատեղին ըլլալն էր: Մարդաս-  
պան գինուորներէ և գազանային կատաղութեամբ  
մոլած թուրք ստուար խուժանի մը կողմէն երբ  
անիրաւօրէն և բնաջնջելու կատարաւ որոշադրակա-  
նութեամբ յարձակում մը կը գործուի թաղին վը-  
րայ. բնականաբար այդ օրինակ կատաղի յարձակ-  
ման մը պահուն, արդէն իսկ մեռնելու դատա-  
պարտուած յուսահատ ու օրհասական ժողովուր-  
դին միակ մտածումը կ'ըլլայ կարելի եղածին չափ

սուղ ծախել իր կեանքը, ու իր ձեռք գտնուած անբաւական միջոցներով կատաղօրէն և յուսահատօրէն կը փարի անձնապաշտպանութեան գործին :

Ջարդը սկսած էր արդէն :

Յարձակումի շրջանակները լայնցած ու կուսակալը, մեծ մեղսակիցը և կազմակերպիչը Ատանայի և շրջակայից մէջ գործուած եղեռնագործութեանց, Ֆէրիքին և Ժանտարմա Գօմանտանին ու Թուրք մեծամեծներուն մասնակցութեամբ, Շուկային ետ կը քաշէ պահ մ'առաջ Հայերը խարելու և կառավարական բարեացակամութիւն ձեռացնելու համար շուկայի պահպանութեան յատկացուած զօրքերը, Թողլով որ անոնք ալ թալանի և ոճիրի բնագոյովը գերագրգռուած Թուրք խուժանին հետ միացած, ամբողջացնեն Շապանիէյի մէջ սկսուած արիւնի, թալանի և ոճիրի հայաջինջ գործը, Հայ թաղերու և շուկայի ամբողջ տարածութեանը վերայ : Մեր առած ստոյգ տեղեկութիւններուն համաձայն, եղեռնագործ կուսակալը հեռագրով կուսակալութեան մէջ գտնուող բոլոր Սանճազներու և Գազաններու կը հաղորդէ, Ջարդի ազդարար նշանը, ըսելով թէ՛ Հայերը յարձակեցան մեր վրայ, ԲէտիՓ գինուորները դրկեցէք մեզ օգնութեան համար, և Ձեր գտնուած տեղերու մէջ թուրքերու կեանքը ապահովեցէք :

Ահա Ջարդի նախընթաց բազմաթիւ պարագաներ, որոնք կը յուսանք թէ կրնան մասամբ լոյս մը սփռել ա'յն բոլոր իրագարծութիւններու մասին, որոնք սղղակի և անմիջական յարաբերութիւն ունեցան դէպքերուն հետ, և որոնք պիտի կրնան ծառայել պատասխանատուութիւնները ճշդելու, եթէ երբէք արդարութեան նմանող ու է ձեռնարկ ուզէր պատժել եղեռնագործները, և

մասամբ դարմանել Ատանայի և շրջակայքի չար-  
չարուած ու ն ս հ ս տ ա կ ու լ ա ծ Հայու թ ե ա ն ա ղ է տ ք ր ,  
և յաւիտենապէս ողբալի ու անդարմանելի կո-  
րուստը :

Ատանայի կուսակալին , Ֆէրիզին , Ժանտարմա  
Գոմանտանին և Թուրք մեծամեծներուն , ինչպէս  
նաև Իթթիհատի կուսակցութեան անդամներուն-  
Մի.թէսարըֆներուն , Գայմազամներուն և գաւա ,  
ռական բոլոր քաղաքներու և գիւղերու Իսլամ  
մեծամեծներու մասնակցութեամբ , թելադրու-  
թեամբ և հրահանգով կազմակերպուած Ատանայի  
և շրջակայքի ջարդը սկսելէն անմիջապէս յետոյ  
ոճրագործները կը ձեռնարկեն Համիտական ստորին  
խեղկատակութեամբ իրենց պատրաստած ջարդին  
պատասխանատուութիւնը նետել իրենց ուսերուն  
վրայէն , և աշխատիլ զայն բեռցնել խեղճ Հայերու  
վրայ , ահռելի ողբերգութեան արիւնոտ տեսա-  
րանները լպիրշ ու շնացող կատակերգութեամբ մը  
փակելու համար : Այդ իրենց ճիգերը սակայն ու  
իցէ ապացոյց չպիտի կրնան հայթայթել ինպաստ  
այդ բռնազրօսուած փաստաբանութեան , ընդհա-  
կառակը անգամ մըն ալ ամբողջ քաղաքակիրթ  
աշխարհի սա համոզումը կապմել պիտի տան , թէ  
Սահմանադրական Թուրքիոյ պաշտօնէութիւնը և  
մուկեռանդ Իսլամութիւնը դեռ մազի չափ հաշտը-  
ւած չեն Սահմանադրութեան ոգիին հետ , և թէ  
Համիտեան դաւադրութիւններուն , դաւաճանու-  
թիւններուն հաւատարիմ հետևողութիւնն է , որ  
իբրև հիմնակէտ , իբրև քաղաքային սկզբունք կը  
կիրարկուի նոյն իսկ Սահմանադրական կոչուած  
պաշտօնատուներու մէջ : Եթէ իրողութիւնը այս  
եղած չըլլար , Թուրք պաշտօնէութիւնը պէտք էր  
ցարդ խորապէս համոզուած ըլլար , թէ Թուրքիոյ



ազատական շարժումին այնքան համակրող և Սահմանադրական ուժերին պահպանումին համար զոհուելու այնքան արամադիր Հայութիւնը, իր ամբողջ Գօմիրթէներով ո՛չ անջատողական, ո՛չ Հայկական և ո՛չ ալ Օսմ. Հայրենիքի ամբողջութեանը վնասող ո՛ր և է գաղափար, ո՛ր և է մտածում՝ չունէր: Պէտք էր ցարդ համոզուած ըլլար, թէ Հայկական անկեղծութիւնը անուրանալի ճշմարտութիւն մըն էր Օսմ. Հայրենիքին հանդէպ: Պէտք էր համոզուած ըլլար, թէ Ատանայի և շրջակայից Հայութիւնն ալ իբրև կարևոր հասուածք իր Ազգին, իր խաղաղ զարգացումին, իր վաճառականութեան, իր ձեռարուեստին և իր երկրագործութեան պարկեշտ ու պատուաւոր աշխատութեամբը Օսմ. Հայրենիքի բարգաւաճումին օժանդակելէ զատ ուրիշ նպատակ չունէր բնաւ: Ատանայի և շրջակայքի պաշտօնական շրջանակները և իրենց կամակատար սճրագործները եթէ քիչ մը դատողութեան տէր եղած ըլլային, այդ օրինակ ձրի և շնական ամբաստանութեամբ պիտի չուզէին ինքզինքնին ծիծաղելի դարձնել, խորհելով թէ ապրատամբութեան պատրաստուող ժողովուրդը պիտի չուզեր ջարդի առտուն իր այնքան գաւակները արտերն ու այգիները դրկել, գանոնք թուրքերու գնդակին ու սուրին նշաւակ ընելու համար, պիտի չուզէր իր վարժարանները բանալ, իր հազարաւոր անմեղ մանուկները թուրք վայրագութեան որս ընելու համար, ու պիտի չուզեր մանաւանդ այդ տեսակ երևակայական ապտամբութեան մը դրօշակը պարզել անանկ ժամանակ մը, երբ իր հարստութիւնը դաշտերու և այգիներու մէջ կը հասուննար, և երբ եղանակին բերմամբ 60—70,000 թուրք, Քիւրա գործաւորներ ներքին գաւառներէ

Ատանայի դաշտը թափած՝ կուգային իր թշնամիին արդէն ահաւոր թիւը կրկնապատկելու : Եւ երբ Ատանայի առաջին ջարդէն յետոյ «Իթիտալ»ի 84րդ թիւին մէջ հրատարակուած ամբոխավարական մոլեռանդայոյզ և անպատկառօրէն ստախօս տողերը կը կարդանք, չենք կրնար չի փորձուիլ երեք տարի առաջ իմ մասիս տրուած ժուռնալին սրիկայ հեղինակը նոյնացնելու «Իթիտալ»ի տողերն ստորագրող Իհսան Ֆիքրիի հետ : Այդ յօդուածին մէջ Իհսան Ֆիքրի կը գրէ, թէ Հայերը կարգ մ'ապարդիւն և արիւնոտ փորձերէ յետոյ, յուսահատ՝ Հայաստանի մէջ իրենց անկախութեան նպատակը իրագործելու կարելիութենէն, իրենց ամբողջ ուշադրութիւնը կիլիկիա դարձուցին . սկսան համախումբուիլ այդ միջավայրին մէջ, ուր կը գտնուէր իրենց եկեղեցական բարձրագոյն Աթոռը—Սոյ կաթողիկոսութիւնը— և ուր Եւրոպական միջամտութիւն մը ստեղծելու աւելի դիւրութիւններ կային ու հոն պատրաստուեցան իրագործել ջանալ իրենց անջատողական ազգային դիտաւորութիւնը(\*): Այս ճրի գրպարտութիւնը, որ Հայերու վերագրուած անջատողական գաղափարներու մասին չարահնար գիւտ մըն է միայն, միևնոյն ժամանակ անգիտակցօրէն և ակամայ ցոյց կուտայ մեզի Կառավարու-

(\*)Չ սրդերու թելադրութիւնը, — Երլտըզի կողմէ ծրագրուած, նպատակ ունէր Հայերու տնտեսական փճացումը, և թերևս Եւրոպական միջամտութիւն մը ստեղծել, Սահմանադրասէրներու հակառակ, ստուգուած է, թէ ուղղակի Սուլթան Համիտէն հրամայուած է, ըստ վկայութեան նախորդ Սուլթանի Ա. Քարտուղար ձէվատ պէյի,

Թիւնը իբրև կազմակերպիչ այն ահաւոր ջարդին, որուն պատասխանատուութիւնը ի գուր կը ջանացուի Հայերուն վերագրել: Յօդուածագիրը իր այդ տողերով պարզապէս ըսել կ'ուզէ, թէ Հայերուն ենթադրական այդ ապստամբութիւնը և իրենց նպատակին գործադրութիւնը արգիլելու և խափանելու համար էր, որ Կառավարութիւնը հարկ տեսաւ Ատանայի և շրջակայից ջարդերը պատրաստելու: Իրաւունք ունինք ուրեմն, մենք ալ Յօդուածագրի մը հետ հաւատալ, թէ Կառավարութեան կողմէ թագուն նպատակ մը կար, այս ջարդերուն մէջ, զոր թուրք մուկանդութեան, Համիտ սկան գրգռումներու և Կուսակալին, Ֆէրիդին, Ճէպէլի Միւթէսարըֆին և քաղաքներու, գիւղերու յետադիմական պաշտօնեաներուն և բռնապետական մեծամեծներուն մեղսակցութեանը միայն պիտի ուզէինք վերագրել: Այդ պատասխանատուութիւնը Հայերուն վերագրել ջանալ կը նշանակէ թուրք ոճրագործներուն մեղապարտութիւնը աւելի ևս ծանրացնել: Երբ Հոկտեմբերին ջարդի սարսափը տիրեց ամբողջ Կուսակալութեան մէջ և թուրքիոյ բոլոր կողմերը, չենք կարծեր թէ այն ատեն Հայկական պատրուակը դեր մը խաղացած ըլլար, և նոյն ատեն Սահմանադրութեան և իրենց անձերուն պաշտպանութեան հա:

ինչպէս հաղորդեցին հեռագիրները: Թէ Սահմանադրասէր թուրք Գօմիթէն, ո'րքան պատասխանատուութեան բաժին ունի այս ոճիրներուն մէջ, չենք կրնար առ այժմ ճշդել այդ պարագան: Լուրջ և անաչառ քննութիւն մը, սակայն, եթէ գոյութիւն ունենայ?, պիտի կրնայ ինդրոյն այս մութ կողմերն ալ լուսաբանել:

մար Հայերը դեռ գէնք ալ չունէին : Չենք կարծեր թէ Մարտ 31ի Պոլսական շարժումին հետ կապ ունեցող, Իգմիրի և Պոլսոյ մէջ Թուրքերուն կողմէն պատրաստուած և Հայերուն վերագրուիլը վճռուած «Տինամիթ»ներու և ուրիշ պայթուցիկ նիւթերու գոյութիւնը յարաբերութիւն մը ունեցած ըլլար Հայկական Կիլիկիոյ մը անկախութեան լպիրշ զրպարտութեան հետ : Չենք կարծեր, թէ Պոլսոյ, Իգմիրի, Պրուսայի, Նիկոմիդիոյ և Սև ու Միջերկրական ծովերու նախահանգիտներուն մէջ կազմակերպուած և ճիշդ Ապրիլ 11ին գործարուութիւնը կանխորոշուած ու յետոյ գրեթէ հրաշքով մը անոնց գործարուութիւնը խափանուած ջարդերու պատրաստութիւնները ու իցէ յարաբերութիւն ունեցած ըլլային Ճէվատ պէյի մը, Ֆէրիք Մուսթաֆա Ռէմզի փաշայի մը, Իհսան Ֆիքրիի մը, Ասաֆ Էսասի մը, Ապաիւլ-Քասիրի մը և ուրիշ շատերու մտքին մէջ յիմարօրէն ըստեղծուած Հայկական Կիլիկիոյ մը հարցին հետ : Չենք կարծեր, թէ Ատանայի մէջ «Եռչասըն Սուլթան Համիտ» և «Քահր օլսուն Մէշրութիէթ» յանկերգով սկսուած, և Թուրք խուժանին կողմէն արձակուած ամէն մէկ գնդակի ընկերացող «Ալ Սանա Հուրրիյէթ», «Ալ Սանա Միւսավաթ», «Ալ Սանա Ատալէթ» բացազանչութիւնները ու է առնչութիւն ունեցած ըլլային, Հայկական անկախութեան մը ցնորական գաղափարին հետ, բացազանչութիւններ որոնց մասին «Իթիտալ» կը լռէ : Չենք կարծեր, որ Սալճըներուն մէջ Իհսան Ֆիքրիի արտասանած հակասահմանադրական և մուկեճառը թեյադրուած ըլլար Հայկական Կիլիկիոյ մը գաղափարէն : Ստոյգ է որ Կիլիկիոյ Հայը անհատաբար զինուեցաւ և զինուելու զգեց, բոլոր Սահ-

մանադրասէր տարրերու նման, երբ տեսաւ, թէ երկդիմի կառավարութիւնը կը քաջալերէր թուրք խուժանին զինուիլը, երբ տեսաւ թէ Պոլսէն դըրկուած վառօդներ միայն թուրք տարրին կը վաճառուէին, երբ տեսաւ, թէ մեծաքանակ զէնք և ռազմամթերք կը փոխադրուէր Կիլիկիոյ զօրանոցները, երբ թերթերէն կարդաց թէ Սուլթան Համիտ քանի մը հազար ոսկի նուէր կը դրկէր Համիտիէի զօրագունդերուն, երբ տեսաւ թէ թուրք կուսակցականներու միջև գոյութիւն ունեցող կըռիւններն ու անձնական հակառակութիւնները նըպաստաւոր գետին մը կը պատրաստէին հակասահմանադրական պոռթկումի մը. երբ տեսաւ թէ Շէրիաթի ճիւղ պաշտօնեաներ «Իթթիհատը Մուհամմէտիէ»ի մը մոլորանքովը գինովցած ձեռք բերած ազատութեան հանդէպ հակահարուած մը պատրաստելու կ'աշխատէին: Կիլիկիոյ Հայը թէպէտ զինուեցաւ, սակայն մէկ կողմէն Սահմանադրութեան վրայ չափազանց վստահ, միւս կողմէն աղքատ և անօթի ըլլալուն համար նիհարօրէն զինուեցաւ, որովհետև ան տարիներէ ի վեր արինոտ փորձառութիւնը ունէր, թէ քաղաքային ներքին ու է շփոթութեան մը պահուն, ինչ որ ալ ըլլար անոր հանգամանքն ու բնոյթը, խուժանական բարբարոսութեան առջև նետուելիք առաջին ողջակէզը Հայերը պիտի ըլլային:

Ատանայի ջոճիկն կազմակերպիչները ոճիրին պատասխանատուութիւնը չբաւականանալով ծանրացնել ամբողջ Հայութեան վրայ, կը ջանան մեզի հաղորդուած անուղղակի լուրերէ դատելով, երևակայական ապստամբութեան անձնական պատասխանատուներ այ ստեղծել, և այդ պատասխանատուները կը փնտռուին Հնչակեան և Դաշնակ-

ցական կուսակցութեանց շարքերուն, նմանապէս իմ անձիս մէջ, զիս նկատելով իբրև Յեղափոխական պետ մը. Արդէն առիթ ունեցանք ըսելու, թէ Հայկական Յեղափոխական շարքերու մէջ այլ ևս գոյութիւն չունէին չարամտաբար իրենց վերագրուած անջատողական սկզբունքներ. անոնք աշատական գաղափարներու ներկայացուցիչներ էին միայն, ըլլալով միևնոյն ժամանակ ամենէն անկեղծ և անձնուէր գործակիցները թուրքիոյ վերածնութեան վարչային և տնտեսական գործին: Բայց տեղական կառավարութեան դահլճ ներկայացուցիչները երևակայական ապստամբութեան մը պատասխանատուութիւնը ինծի և Յեղափոխական կուսակցութիւններու վերագրելով, զիս ներկայացընել ուզած են միևնոյն ժամանակ՝ Յեղափոխական ընկերութիւններու պատկանող կուսակցական մը կամ կուսակցապետ մը: Բոլոր անոնք, որոնք քիչ ու շատ զբաղած են կուսակցական ինդիւրներով, որոշապէս գիտեն, թէ Օսմ. Սահմանադրութենէն երեք ամիս վերջ այլևս կը մտնէի Հ. Ս. Ռ. կուսակցութեան «Լեկալ» խմբաւորումին մէջ, որուն միակ նպատակն է եղած խաղաղ զարգացումը, թուրքիոյ գանազան տարրերու հետ համերաշխութեամբ: Հետեւաբար, ինձմով և Յեղափոխական Մարմիններով կառավարութեան կազմել ուզած խառնուրդը արուեստականօրէն ձևակերպուած կեղծիք մը պիտի ըլլայ պարզապէս, որ ճշմարտութեան ու իրականութեան հակասելէ գատ պիտի չկրնայ ուրիշ բանի ծառայել: Եւ արդէն ի՞նչ հարկ պատասխանատուներ փնտռել, երբ բուն պատասխանատուները, բուն ոճրագործները մէջտեղ կը մնան:

Սոյն տեղեկագրիս նախընթաց տողերը կարելի

եղածին չափ ամփոփ գծերով արդէն իսկ մասնա-  
նշեցին այդ ոճրագործներէն գլխաւորները : Ասոնց  
գլուխը կը գտնուին նախորդ կուսակալ Ճէվատ  
պէյ և Զինուորական հրամուտար Մուսթաֆա Բէմ-  
զի փաշա : Եթէ այս երկուքը ջարդին կազմակեր-  
պիչներէն չըլլային, իրենց համար շատ դիւրին  
պիտի ըլլար գէպքին սկզբնաւորութիւնը մարել,  
Քէչէճիլէրի մէջ հաւաքուած խուժանը անմիջա-  
պէս ցրուելով, որուն համար ու իցէ դժուարու-  
թիւն գոյութիւն չունէր բնաւ եթէ ուզէին : Ո-  
րովհետև անոնք որ ուզած վայրկեննուն երեքօր-  
եայ կատաղի ջարդէ մը և պատերազմէ մը յետոյ  
իրենց ձեռքին տակ գտնուող գինուորական ուժով  
կարող եղան թափուած այնքան արիւններու մէ-  
ջէն դադրեցնել ջարդերն ու հակառակութիւննե-  
րը, որոնք որ մէկ կամ երկու ոտաիկանով պահ  
մը օտար հաստատութիւններ պահպանեցին, իրենց  
համար աւելի դիւրին պիտի ըլլար այդ միւսոյն  
գինուորական ուժով ցրուել սակաւաթիւ ամբոխ  
մը, երբ դեռ անիկա չէր թաթխուած պարկեշտ  
քաղաքացիներու անմեղ և յորդահոս արիւնին  
մէջ :

Կուսակալ և Ֆէրիք պատասխանատու են կա-  
տարուած ոճրագործութեանց, որովհետև Շապա-  
նիէ թաղին վրայ կատարուած առաջին գինուորական  
յարձակումը և յետոյ զօրքերուն բնդհանուր կո-  
տորածներու և աւարառութեանց մասնակցութիւ-  
նը տեղի ունեցած է բուն իսկ իրենց սրոշմամբ և  
թելագրութեամբ : Կուսակալ և Ֆէրիք պատասխա-  
նատու են, որովհետև ո՛չ միայն կուսակալութեան  
Սանճագի և Գազայի կեդրոններուն ջարդի ազդա-  
րար նշանը տուին հեռագրով, այլ և օգնական  
զօրք ուզելու պատրուակին տակ շրջակայքէն, և

նոյն իսկ քաղաքէն մուկեռանդ խուժան մը հաւաքելով «Բէտիֆ» անունին տակ, այդ խուժանին պաշտօնական զէնքեր բաժնեցին, և թողուցին որ խուժանը պաշտօնական զէնքերով զինուած մասնակցի թալանին և ջարդին: Կուսակալ և Ֆէրիք պատասխանատու են, որովհետեւ անոնք Հին Բէժիմի օրով ընդունուած սխիթէմի մը համաձայն բուն իրողութիւնը խեղաթիւրելով կեդրոնական կառավարութեան սխալ ու սուտ տեղեկատուութիւններ ըրին, և չը թողուցին որ Քրիստոնեայ հասարակութիւններ իրաց. կացութիւնը հեռագրով պարզեն՝ դէպքի ծագումին իսկ՝ իրենց հոգևոր կեդրոններուն: Կուսակալ և Ֆէրիք պատասխանատու են, որովհետեւ Ատանայի մէջ պաշարման փճակ հրատարակուած և տիրած պահուն, արտօնեցին «Իթիտալ» ի ամբոխավար և գրգռիչ հրատարակութիւնները, և պատրաստեցին երկրորդ և ահաւոր ջարդը, Հայերու զէնքերը հաւաքելէ վերջ, Կուսակալ և Ֆէրիք պատասխանատու են, որովհետեւ Միսիսի Հազարապետին ջանքով ու պաշտպանութեամբ տեղւոյն փրկուած Հայերուն կեանքը առանց ապահովութեան տակ առնելու, Հաճըն ղրկելու պատրուակին տակ Հոգարապետը հեռացուցած, և տեղւոյն Հայերը ամբողջովին ջարդել տալու պատճառ եղած են: Կուսակալ Ճէվատ պէյ պատասխանատու է, որովհետեւ ուզելով Մէրսինի մէջ ալ կատարել տալ իր եղեռնագործութիւնը, հակառակ Մէրսինի Միւթէսարըֆին ազդարարութեան՝ ուզած է թուրք խուժանները թռչններով Մէրսին փոխադրել, և այդ կանխորոշ վտանգին պատասխանատուութեան մասնակից չի գտնուելու համար հրատարական տուող Միւթէսարըֆին



հրաժանականը կ'ընդունի, հասնելու համար իր նպատակին: Ու պահ մը վերջ ստիպուած կը համակերպի ՄիւթէսարըՓին առաջարկութեան:

Ատանայի բոլոր հակասահմանադրական թուրք մեծամեծները պատասխանատու են, Հոկտեմբերեան ջարդի կազմակերպութեան, և Ապրիլեան ջարդի գործադրութեան հեղինակներն ըլլալնուն համար: Պատասխանատու են իհսան Ֆիքրի և Իթթիհատեան խմբակը, որոնք գործքով, խօսքով և գրով հրահրած են արիւնոուշտ խուժանին մուկեռանդութիւնը: Պատասխանատու է Ճէպէլի Պէրէքէթի ՄիւթէսարըՓ Ասաֆ Էսատ Պէյ, իր ըստորադաս պաշտօնեաներով և Գայմագամներով քանի որ ինք Էրզինի մէջ խուժանին Մարթին բաժնած, անոնց մուկեռանդութիւնը գրգռած և Չոք-Մարզուանի վրայ կատարուած յարձակումները ղեկավարած է, նոյն իսկ Չոք-Մարզուանցիներու վկայութեամբ, որոնք հեռադիտակով զինքը աչքէ չեն վրիպեցուցած. որովհետև Փայասի բանտը բանալ տուած և հոն գտնուած Գրիստոնեաները ջարդել տալէն ետք, բերդարգել 5—600 ոճրագործներ ազատ արձակած և Հայ զիւղերու վրայ յարձակել տուած է. որովհետև իր սարքած ջարդերը արդարացնելու համար ճշմարտութեան հակառակող դաւաճան հեռագիրներով կեդր. կառավարութեան ուշադրութիւնը վրիպեցուցած և արիւններու շարունակարար՝ ահեղօրէն թափուելուն պատճառ եղած է: (\*) Ասոնցմէ դուրս կան տա-

(\*) Երեսփ. Ժողովոյ 67րդ. նիստին մէջ կը կարդացուի Ճէպէլի Պէրէքէթի ՄիւթէսարըՓի մէկ հեռագիրը, ուր կ'ըսէ, «Թիւրիմացութեան

կաւին բազմաթիւ պատասխանատուներ, ջարդ տեղի ունեցած քաղաքներու և գիւղերու մէջ, զորս կարելի պիտի ըլլայ շուտով երևան բերել, եթէ կառավարութիւնը բարեյօժարութիւնը ունենայ կեդրոնին մէջ յազմուած Խառն Յանձնաժողով մը զրկել Ատանա, ճշդելու համար պատասխանատուութիւնները, պատժելու յանցաւորները և դարմանելու դժբաղդ Հայերուն անդարմանելի կորուստները:



հետևանօք Տէօրթ Եօլի մէջ յառաջ եկած ցաւալի դէպքեր վերջ գտած են...» ու չի խոստովանիր թէ այդ թիւ րիմացութիւնը պարզապէս աղտոտ ծածկոյթ մըն է, իրենց կանխօրօք սարքած, ու դիտումնաւոր կերպով կազմակերպած ջարդին վրայ:

UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 08884 8893





**Barcode  
Inside**

